№ 112 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 26

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 26 № 112

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ամէն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., հօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի. Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Գէորգ, Սարգիս Օհանէսեան Ապրիամեաններ, Սօֆիա Օհաննէսեան Բարսեան և Եկատերինա Օհանէսեան Թունիվ իրանց որդկերանցով ամենածանր վշտով համակված յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջին չորսի, իսկ վերջինների մօր և հօրեղբօր թանկագին և անմոռանալի՝

ԳՐԻԳՈՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ԱՊՐԻԱՄԵԱՆԻ

եղերական մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 20-ին։ Անբիծքը կատարվելու է ամէն օր երեկոյեանները ժամի 7-ին, իսկ յուղարկաւորութիւնը շաբաթ օրը, ամսիս 27-ին, առաւօտեան 10-ը ժամին իր սեփական տունից (Հալաբար, Կապրիօվսկի փողոց № 11) դէպի ս. Մինասի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատան։ 2—3

Գրիգորը Սարգիս և Միքայէլ Ռեվազանցներ, Վարվարէ Ռեվազեան և Տաթէլ Դաւթեան խորին վշտով համակված յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինները իրանց թանկագին մօր, երկրորդ սկեսուրի, երրորդը քրոջը՝

ՆԱՏԱԼԻԱ ՌԵՎԱԶԵԱՆԻ

մահը, որը տեղի ունեցաւ ամսիս 22-ին։ Անբիծքը կատարվելու է ամէն օր՝ երեկոյեանները ժամի 6-ին, իսկ յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 28-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից (Հալաբար, Կոնստանտինովկայա փող. № 38) դէպի ս. Աւետարան եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—2

ԳՆԵՑԷՔ ԱՌԱՆՑ ՐԻՍԿԻ

3000 տուփ մէկ ֆունտանոց

„ՇՕԿՕԼԱԴ ԵԱՐՎԷԼ“

(Շօկօլադի նուրբ և ընտիր տեսակը)

500 ռուբլի պրէմիայով, 1 ռուբ. մինչև 50 ռուբ.։ Ծախվում է ամենակարճ ժամանակամիջոցում։ Իւրաքանչիւր տուփի արժէքը 1 ռուբ. սովորական գնով։ Кондитерская «Ярвель» Вельяминовская, № 4.

(առ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործակցութեան անհրաժեշտութիւն։ Վերջին տեղեկութիւններ. Թիֆլիսի լիազօրների խորհրդակցութիւնը, Պետական Դումայի շուրջը. Մենք մեռնում ենք միմիայն չը հասկանալուց. Մահվան պատիժը Դումայում. Զանգի ձայնը. Նամակ Գանձակից. Նամակ Բաքուից. Նամակ Ախալքալաքից. Թուրքիայի Հայկական Թեմարեան երկսեռ դպրոցը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅ ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Գանձակի դաւառի Ջաբրայիլ գիւղերը։

ԴՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ

I

Այսօր, մայիսի 26-ին, Թիֆլիսում տեղի կունենան Պետական Դումայի պատգամաւորների ընտրութիւնները թէ Թիֆլիս քաղաքի և թէ Թիֆլիսի նահանգի կողմից։ Ընտրութիւններից յետոյ պատգամաւորները ճանապարհ կընկնեն Պետերբուրգ մասնակցելու Պետական Դումայի պարապմունքներին։

Անդրկովկասից արդէն ճանապարհ է ընկել Գանձակի պատգամաւոր Զիադխանով։ Շուտով ճանապարհ կընկնեն Գանձակի նահանգի միւս պատգամաւորը, բժիշկ Ռ. Բահաթրեան, Երևանի նահանգի պատգամաւորներ՝ Գ. Տէր-Պետրոսեան, Լ. Թումանեան և ուրիշներ։ Նոյնը տեղի կունենայ Քութայիսի նահանգից, որտեղ արդէն կայացել են ընտրութիւններ։

Եւ այդպիսով կովկասեան պատգամաւորները, թէև ուշ, ներկայ կը լինեն առաջին Դումայի նախնական գործունէութեան գոնէ մի քանի նիստերին։

II

Անդրկովկասեան պատգամաւորները պատկանում են որոշ կուսակցութիւններին։ Ուստի գնալով Պետական Դումա, նրանք կը յարեն այն կուսակցութիւններին, որոնց նրանք պատկանում են։

Պէտք է նկատել, որ փոքր ինչ անորոշ և անգոյն են պահել իրանց մեր երկրի մահմեդական ներկայացուցիչները, որոնք կարական կերպով չեն որոշել իրանց դիրքերը ռուսական պարլամենտական կուսակցութիւնների վերաբերութեամբ։ Եւ մեր ծանակայ ապագան ցոյց կը տայ թէ ինչ տեղ կը բռնեն նրանք պարլամենտական պարապմունքների և գանազան խնդիրների քուէարկութեան ժամանակ։

Վրացիների մեծ մասը պատկանում է սոցիալ-դեմոկրատական, իսկ հայերը—սահմանադիր-ռամկավար կուսակցութիւններին։

Երբ վերջանան բոլոր ընտրութիւնները, կարող կը լինենք կազմել ճիշտ գաղափար կովկասեան ներկայացուցչութեան մասին։

III

Բացի այն ընդհանուր խնդիրներից, որոնք ներկայումս շօշափվում և ծեծվում են Պետական Դումայում, շուտով առաջ կը գան մի շարք խնդիրներ, որոնց վերաբերութեամբ անհրաժեշտութիւն կը զգացվի ուշադրութեան առնել տեղական առանձնայատկութիւնները և որոշումներ կայացնել տեղական ուսումնասիրութիւնների հիման վրա։

Այդպիսի խնդիրներ, անկասկած առաջ կը գան մեր թւով մեծ Անդրկովկասի համար, որը ներկայանում է իբրև մի երկիր՝ շատ բնորոշ առանձնայատկութիւններով, և դրանցով նա խիստ կերպով տարբերվում է պետութեան միւս մասերից։

Եւ անշուշտ անդրկովկասեան պատգամաւորների վրա պարտաւորութիւն է ծանրանում հմուտ և տեղեակ լինել մեր երկրի կարիքներին և ընդունակ լինել հեղինակաւոր խօսք ասել երկրի պահանջների մասին։

IV

Անտարակոյս, շատ լաւ կը լինէր, եթէ մեր պատգամաւորները բոլորն էլ պատրաստված և հմուտ անձեր լինէին և կարող լինէին ինքնուրոյն կերպով երկրի շահերը պաշտպանել Պետական Դումայում։

Բայց ընտրողական գործում ամէն անգամ չէ աջողվում անցկացնելցանկալի թեկնածուին և աջողութիւն են ստանում աւելի քիչ պատրաստութեամբ անձեր։

Սակայն իւրաքանչիւր քաղաքացի և իւրաքանչիւր քաղաքական կազմակերպութիւն, որի համար թանկ են ժողովրդի բարօրութիւնը և իր կուսակցական ծրագիրը, պէտք է իր կողմից շտապակէս աշխատել իր պատգամաւորին, հայթայթելով նրան այն բոլոր նիւթերը, որոնք անհրաժեշտ են, որպէս զի պատգամաւորը կարող լինի Պետական Դումայի առաջ աջողութեամբ պաշտպանելու իր շրջանի շահերը։

V

Ուստի մեր երկրում չը պէտք ընդհանրի կուսակցութիւնների գործունէութիւնը և նրանք պէտք է լուրջ կերպով զբաղվեն այն էական և խոշոր հարցերով, որոնք պէտք է քննութեան առարկայ դառնան Պետական Դումայում։

Այդպէս օրինակ, սահմանադիր-ռամկավար կուսակցութեան բիւրօն մտադիր է յատուկ ուսումնասիրութեան ենթարկել Անդրկովկասին վերաբերեալ մի շարք խնդիրներ, որպէս զի նա թէ կովկասեան և թէ ռուսական իր կուսակիցների բերանով կարողանայ Պետական Դումայում այս կամ այն ոգով ազդել այդ խնդիրների լուծման վրա։

Դա նախապատրաստական գործունէութիւն է, որը ոչ միայն կարևոր է իր վերջնական նպատակի համար, այլ և իբրև մի ուսանելի միջոց՝ կրթելու տեղական հասարակութիւնը քաղաքացիական դպրոցում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երեքշաբթի, մայիսի 24-ին տեղի ունեցաւ հայ-թուրքական խորհրդակցութեան նիստը Վէյդենբաումի նախագահութեամբ։

Նիստի նկարագրութիւնը կը տանք միւս անգամ։ Առ այժմ կարող ենք հաղորդել մի աննպաստ լուր, այն, որ մինիստրութիւնը մերժել է դրամական փոխառութիւնը ադէտեալ գիւղերի համար։

—

Խալդան (Արէշի գաւառ), 24 մայիսի, 6 ժ. 20 ր.

Արէշի գաւառի Խանաբադ գիւղի բոլոր ձիերին երէկ, մայիսի 23-ին, քշեցին տարան։

Խանաբադը գտնվում է Արէշի գաւառի ՀՕսված գիւղերի շարքում։ Այժմ նա ենթարկվում է նոր դժբաղդութեան։ Եթէ տեղական իշխանութիւնը արագ և եռանդուն միջոցներ գործ չը դնէ յետ ստանալու ձիերը և պատժելու աւազակներին, կարող են վանդի ենթարկվել և միւս գիւղերը, որոնք գտնվում են աւելի վատ վիճակի մէջ, քան Խանաբադը։

—

Քանաքեռ, մայիսի 23-ին

Մայիսի 22-ին կօզակները մահացու կերպով վիրաւորում եմ առնչեցի մի հայի։ Դէպքը պատահում է այսպէս։

Քանաքեռից Առինջ տանող ճանապարհը ընկնում է կօզակների համար գիւղի վերևում շինված կազարմաների մօտով։ Ցիշեալ օրը առնչեցին իր եղբօր հետ (երկուսի անունն էլ անյայտ է) անցնում են այդտեղից Առինջ գնալու նպատակով։ Կօզակները նկատելով նրանց, յարձակվում են առաջինի վրա և սկսում են անխնայ ծեծել։ Ինչպէս է լինում միւսը ազատվում է և վազելով գիւղը հասաւ է կանչում. գիւղացիք գալիս են, վերցնում իրանց ծեծված վիրաւոր եղբօրը և տանում գիւղը։ Քանաքեռցիների ասելով, վէրքը, որ հասցրած է դէպին, վտանգաւոր է։

Այս դէպքը պատահած նախընթաց օրը, կօզակները մի քեռաւոր հայի ձեռքից խլում են ձկնելով լի քթոցը, որ վերջինս տանում էր քաղաք ծախելու։ Վերջին ժամանակներում առհասարակ կօզակների վայրագութիւններին չափ ու սահման չը կայ։ Նրանք ամէն պատահած հային վիրաւորում են թէ խօսքով և թէ գործով։

Ս. Նազանեան

—

Խանքենդ-աւան, 20 մայիսի

«Մշակ» լրագրիդ № 105 կարդում ենք հետևեալը. «Ապրիլի 27-ին Խանքենդի հայերը յարձակվեցին պատուաւոր (?) մալիբէկլուեցիների վրա, սպանեցին ծերուկ Նարիմանին, վիրաւորեցին տանուտէրին և իր օգնականին»։ Մենք այդ հեռագրին ոչ մի նշանակութիւն չէինք տայ, եթէ գրած լինէր դիցուք մի կալուածատէր բէկ, բայց աբի տես, որ Շուշու թուրքերի գաւառական դպիր Օրուջ-Զադէն էլ պարապ չէ նստած, նա էլ իր կարողութեան չափ հայերի վրա մտացածին և շինծու-ազրօվկատօրական լուրեր է հաղորդում։ Ասել է թէ աշխարհական է թէ հոգևորական թուրքերը միատեսակ կրթութիւն ունեն, ճարպիկաբար շինծու յանցանքներ բարդել գիտեն հակառակորդի վրա։ Այդ հեռագրի մէջ մազալուն այն է, որ մալիբէկլուեցիները կոչվում են «պատուաւոր»։ Մալիբէկլուեցիների փեշակը աւազակութիւն ու մարդասպանութիւնն է։ Եալախ-Շուշի տրակտի ապրանքների տեղափոխութիւնը սրանց ձեռքին է։ Ֆուրգոնները կրում են և ապրանք և աղքատ դասակարգի մարդիկ ու կանայք։ Դրանց վերջնական իշխանը Խանին-բարն է։ Ֆուրգոնները բերած քանի-քանի մարդկանց գլուխներ են կորրված Խանին-բաղում, դիակներ են աղբակոյտերում թաղված, իսկ եղած-չեղածը կողոպտված։ Գանի-քանի զանգեզուրցի, զոփանցի, սիսիանցի, վարանդեցի և դիզակեցի մշակներ են այդտեղ անհետ կորած մալիբէկլուեցիների ձեռքով և այսօր նրանք կոչվում են «պատուաւոր»։ Եթէ սրանք պատուաւոր են, իսկ միւսներն ինչ են։

Շուշու գաւառական դպրի Օրուջ-Զադէի յիշած յարձակումը հետևեալն է, որի մասին իր ժամանակին գրված էր «Մշակում»։

Ապրիլի 27-ին, կէսօրից յետոյ, մօտաւորապէս 100 հոգի զինված մալիբէկլուեցիներ յարձակվում են խճուղու վրա բան անող կարկաժանցի հայ մշակներին կոտորելու։ Կարկաժանցիները պատսում են, որ Մալիբէկլուի աւազակ տանուտէր Դադաշը մի չուլած ձի նստած, քշած, եկաւ մօտեցաւ մեզ, երեք անգամ արձակեց հրացանը, բայց չը տրաքեց, և մենք փախանք, նրա ձին կատաղած էր և չէր կանգնում, ձին էլ հակառակ կողմը փախաւ։ Այնուհետև այդ խուժանին պատահում են հայ սայլապանները, որոնցից մէկը սպանվում է, միւսը վիրաւորվում, իսկ մնացածները փախչելով ազատվում են։ Թուրքերը շատ անկարգ կերպով էին հրացաններ արձակում, մի մասը կուում էր Խանին-բաղի ճանապարհի վրա, տանուտէրի ղեկավարութեամբ, իսկ միւս մասը նրանց հետից, Մալիբէկլուի առջևից, այնպէս որ նրանց արձակած գնդակները անցնում էին առաջին խմբի գլուխներից, որի ժամանակ սպանվել է Նարիմանը, վիրաւորվել աւազակ տանուտէրը և իր օգնականը։

Խանքենդի հայերից ոչ մէկն էլ ոչ յարձակում է կատարել և ոչ զէնք ունի։ Երբ Խանքենդի դօրքը գնում էր ազատի վայրը, Խանքենդի անգէն հայերին ճանապարհի կէսից յետ դարձրեց և կօզակներից մէկն էլ սրով վիրաւորեց մէկին. սրանք գնում էին սայլապանների դիակները բերելու։ Խանքենդի հայերը զինաթափ են արված, երեք անգամ խուզարկութիւններ են կատարել, ճնշել են, բանտարկել են և հապիւ սրանք 20 տարում նորից կենդանանան։ Բայց չը նայելով, որ Խանքենդի հայերը յարձակումը գործած չեն և չէին էլ կարող գործել, այնուամենայնիւ մալիբէկլուեցիները մատնացոյց են արել 5—6 հայի, որոնցից մի քանիսին իշխանութիւնը ձերբակալեց։

Ե՞րբ պէտք է արդարադատութիւն տեսնենք։ Ե՞րբ պէտք է պրօվօկատօրական եղանակը վերանայ։

***

—

Եալախ. «Մի քանի օր առաջ Բաքուից Եալախ եկան և Եալախից ուղեւորվեցին դէպի Ադդամ մի քանի թուրքեր Բախիշ Արամեանին փնտրելու համար, որին թուրքերը իր զօքանչի և մի քանի հայերի հետ միասին Շուշու ճանապարհի վրա գերի էին վերցրել։ Այսօր, մայիսի 22-ին, այստեղ տեղեկութիւն ստացվեց, որ Բախիշ Արամեանը միւս հայերի հետ միասին սպանված են, կենդանի են մնացել կանայք և օրիորդները։ Պնդում են, որ սպանվածների դիակները, թւով մօտ 27, գտնված են անտառում, Խաչէն գեղի մօտ»։ (Кавказъ)

—

Խանքենդ-աւան, մայիսի 21-ին

Ահա քանի ժամանակ է, մենք գրում ենք Խանքենդի և սրա շրջականերում կատարվող ասօրեայ մնացքները, կատարվող հանդամանքները։ Գրելով մենք պահպանել ենք երկու սկզբունք, նախ, որ լրագրի վարկը բարձր պահելով, մտացածին, շինծու և երևակայական լուրեր չը հաղորդել և լրագրը մոլորութեան մէջ ձգել, և երկրորդ՝ ինձ պատասխանատուութիւնից ազատ պահել։ Իրողութիւնը գրել ենք առանց աւելորդաբանութիւնների։

Այժմ գրում ենք հետևեալ իրողութիւնները, առանց մեր կողմից բացատրութիւններ տալու, դատողութիւնն ու եզրակացութիւնը ՀՕՊՆԵԼով ընթերցողներին կաղմիլու։

Ահա քանի օր է Գանձակի զեներալ-նահանգապետ Ալիխանն այստեղ է։ Ամսիս 16-ին նա այցելութեան գնաց Մալիբէկլուի Թուրքերին։ Մալիբէկլուեցիք արդարև գող են, մարդասպան, այդ մասին փաստեր աւելորդ եմ համարում բերելու, սակայն նրանք գողութիւն և մարդասպանութիւն կատարում էին շատ զգուշութեամբ, գիշերները, իսկ նահանգապետի այստեղ գնալուց յետոյ, նրանք փախանակ սարափելու, ընկճվելու սպանալիքների տակ, ամսիս 18-ին, առաւօտեան արեգակի պարզ ճառագայթների տակ, Խանքենդուց ներքև չարաչար սպանեցին Շուշիքենդ գիւղացի ածխագործ Ներսէս Ժամհարեանցին, Գրիգոր Յարութիւնեանին էլ աներևոյթացրին։ Այս մէկ։

Երկրորդ՝ ամսի 19-ին նոյն մալիբէկլուեցիքը սպանեցին մի սիւնի նաւթավաճառ թուրքի, դիակը բերին ձգեցին Մազի կամուրջի մօտ, իսկ ուղտերը տարան կապեցին Խանին-բարին մօտ։ Մալիբէկլուեցիք աշխատեցին այդ յանցանքը բարդել հայերի վրա, որպէսզի նրանց գլուխը ոմբակոծել ու տուգանքի ենթարկել տան, բայց այդ նրանց չաջողվեց. սպանված թուրքի երկու ընկերները ափ իբրեան զոռում էին, աղաղակում էին, որ այդ սպանութիւնը մալիբէկլուեցիք են կատարել, և ոչ հայերը, որովհետև, ասում էին նրանք, նախ քան մեր այստեղ գալը նրանք (թուրքերը) մեզ սպառնալիք էին տալիս, որ մենք հայերի վրա ոչինչ չը ծախենք, որ մենք սիւնի ենք և նրանք շիա։

Երրորդ՝ շուշիքենդցիք ամսիս 19-ին եկան Խանքենդի, բողոքեցին գեներալ Ալիխանին, որ մալիբէկլուեցիք արգելում են իրանց գնալ իրանց ձմեռանոց Փիրամաքին, որ այնտեղից մալիբէկլուեցիք քանի-քանի երեխաներ են բռնել և տարել, մորթոտել, անասունները գողացել և այլն, և այլն, այնպէս որ իրանք այլ ևս հնարաւորութիւն չունեն այնտեղ գնալու և խնդրում են գեներալից բարեհաճ կարգադրութիւն անելու, որպէս զի Փիրամաքին իրանց համար կարելի լինի գնալ։ Գենեբալը այս կարգադրութիւնն է անում։ Գնացէք Մալիբէկլու, ձեռք մեկնեցէք և թուրքերի հետ հաշտութեան դաշն կապեցէք, որպէս զի այդ հաշտութիւնը ամուր և հաստատուն լինի և որպէս զի նրանք այսուհետև ձեր մարդկանցը ձեռնամուխ չը լինեն և չը սպանեն։ շուշիքենդցիք շփոթվում են, բայց անհնար են համարում չը կատարել գեներալի հրամանը։ Մի սպայի և մի քանի կօզակների հետ նրա՛ջ գնում են Մալիբէկլու։ Գիւղից դուրս են կանչում, գալիս են թուրքերը և հայոց կամիտեատները, Ասկարանի յարձակումները նորից վիճաբանութեան առարկայ դարձնելով՝ ցանկալի հաշտութիւնը չէ կայանում։ Եւ... Շուշիքենդցիք յուսահատված վերադառնում են Խանքենդի, յայտնում են չը կայացած հաշտութիւնը ու գնում իրանց Շուշիքենդ գիւղը, ողբալու իրանց վիճակը։

Չորրորդ՝ գեներալ-նահանգապետ Ալիխանը հրամայում է պրիստաւին Խանքենդուց վռնդել Ալիղուլի գիւղից այստեղ գաղթած ալիղուլեցիներին։

Եռաստուլները ընկած փողոցներն ու տները ժողովում են ալիղուլեցիներին պրիստաւի դուռը։ Պրիստաւը վճռականապէս յայտնում է ալիղուլեցիներին, որ պիտի դուրս գան Խանքենդուց, որովհետև թուրքերը պիտի գան այստեղ։ Հայերի խնդիրները, աղաչանքները, ողբերները իրանց թողնելու Խանքենդում, ևս չեմ նկարագրում. նրանք ցնցող են, արտասուք հոսեցնող, սիրտ ալեկոծող։ Պրիստաւը զլխնելով նրանց խնդիրքին, միայն այսքանս է ասում. «Ես ձեզ այստեղ թողնել չեմ կարող, այդ բանը գեներալ-նահանգապետից է կախված, գնացէք նրա հաճութիւնը առէք»։ Խմբված ժողովուրդը գնում է տեղիս զինուորական կլուբի առաջ կանգնում։ Դուրս է գալիս գեներալ-նահանգապետ Ալիխանը և հետևեալն է խօսում. «Ալիղուլեցիներ, հրաման է, որ հայերը և թուրքերը պէտք է վերադառնան իրանց տեղերը, հրամայում եմ ձեզ դուրս գալ Խանքենդուց, դուք անհնազիսա մարդիկ էք, այստեղից սպառնալիքներ էք ուղարկում Մալիբէկլուում և Աղդամում ապրող թուրքերին, թէ՝ եթէ դուք գաք այստեղ, ձեզ այս և այն ենք անելու, չը գաք. դրանք էլ ձեզանից վախում են և չեն գալիս. դառապլեցէք նրանց բնակարանները, դուրս եկէք այստեղից, որպէսզի թուրքերը կարողանան գալ իրանց բնակարանները»։ Հայերը հարցնում են. ապա մենք ո՞ւր գնանք. Ալիղուլի վերադառնալ չենք կարող, որովհետև շրջապատված ենք հազարաւոր զինված քրդերով, որոնք մերոնց կոտորեցին, թալանեցին և գիւղը հիմովին կործանեցին, ո՞ւր գնանք, մեր տեղը ո՞րտեղ էք ցոյց տալիս»։

Գենեբալը պատասխանում է. «Ես չը գիտեմ, ուր ուզում էք, գնացէք, միայն դուրս եկէք Խանքենդուց, որպէս զի թուրքերը վերադառնան այստեղ. նրանք ձեզանից վախենում են, դուք անհնազիսա մարդիկ էք և նրանց սպառնալիքներ էք կարդում»։ Հայերը պատասխանում են. «Մենք ռուսաց հպատակ ենք, տուել ենք պետական բոլոր հարկերը առանց դժուարութեան, էլի տալու ենք. քրդերը մեզ կոտորեցին, թալանեցին, գիւղը կործանեցին և մենք մերկ, քաղցած, փախանք եկանք այստեղ և կերակրվում ենք և պահպանվում այստեղի հայերի խնամքի տակ, կերակրվում ենք սրանց սեղաններից ընկած հացի փշրանքներով։ Մենք հայերի տներում ենք ապրում և ոչ թուրքերի. թուրքերի տները խսպառ ազատ են։ Մենք թուրքերին սպառնալիքներ չենք ուղարկել և չենք էլ կարող ուղարկել, ոչ զէնք ունենք և ոչ ոյժ՝ կռուելու, քաղցած և մերկ մարդիկ ենք, միայն մեզ վրա շունչ կայ և ուրիշ ոչինչ. եթէ ձեր ասածի չափ ոյժ ունենայինք, քրդերի յարձակումները կարող էինք յետ մղել, բայց մենք նրանցից փախանք, որ այստեղ հանգիստ ապրենք, բայց այժմ այդ դատարկ հանգստութիւնն էլ չը կայ. հրամայում էք դուրս գալ Խանքենդուց, բայց մենք չը գիտենք թէ ո՞ւր գնանք, որ կարողանանք ապրել. ամէն տեղ ռուսին է և մենք էլ ռուսի հպատակ և մեզ հրամայում էք այստեղից դուրս գալ։ Ուրիշ մի այնպիսի տեղ չենք ճանաչում, որ գնանք և բնակութիւն հաստատենք այնտեղ։ Եթէ անպատճառ ստիպում էք մեզ դուրս գալ այստեղից, ապա ուրեմն մի հրաման տուէք մեզ, որ գնանք Թուրքանանք և վերադառնանք մեր գիւղը—Ալիղուլին, որ կարողանանք այնտեղ խաղաղ ապրել։ Մենք հանգստութիւն և խաղաղութիւն ենք ուզում, մենք չենք ուզում, որ մեր որդիքը մեր առաջ կոտորեն և մեզ լացացնեն, սրտերս այրեն, մեր կանանցը մեր աչքերի առաջ անպատվեն. մենք խաղաղութիւն և հանգստութիւն ենք ցանկանում։ Խնդրում և աղաչում ենք կամ մեզ թողէք մնանք այստեղ Խանքենդու հայերի մօտ, կամ հրաման տուէք գնանք Թուրքանանք, որ գնանք մեր գիւղը՝ կարողանանք այնտեղ հանգիստ ապրել։

Գենեբալը զլխնելով ալիղուլեցիների աղաչանքին, թոյլ է տալիս նրանց բնակվել Խանքենդում, միայն յայտնում է, որ սրանք թուրքերը գալուց, նրանց վիրաւորական խօսքեր չասեն, սպառնալիք չը կարդան, չը հայհոյեն, որովհետև թուրքերը խաղաղ, հանգիստ և վախկոտ մարդիկ են։

Հինգերորդ՝ Խանին-բաղից ներքև սպանված գտնվել է մի թուրք, 8-ն էլ անհետ կորած։ Այս քանը վերագրեցին հայերին և զօրապետ Վելիերը երկու թնդանօթով ոմբակոծեց և տուգանքի ենթարկեց Խանձկ, Պորեցիք գիւղացիներին, պահանջելով յանցաւոր հայերին, թուրքերի սպանողներին։ Այսպէս նա Խանձկ գիւղում ռումբերով կործանել է 6 տուն, և ստացել 450 ր. տուգանք. Պորեցիք գիւղում վնասել են 14 տուն և ստացել 1210 ր. տուգանք. Դահրաւում կործանել են մի տուն և ստացել 1000 ր. տուգանք. Դաշբուլաղից առել են 600, իսկ Մեհտիշէնից 140 ր. տուգանքներ։ Խանձկ, Պորեցիք և Դահրաւ գիւղերի իւրաքանչիւր ծխի վրա 20-ական կօպէկ տուգանք է դրված, մինչև որ կը տան յանցաւորներին, թուրքերի սպանողներին։

Վեցերորդ՝ վերև յիշեցի, որ ամսիս 18-ին մալիբէկլուեցիք սպանեցին շուշիքենդցի ածխագործ Ներսէս Ժամհարեանցին և Գրիգոր Յարութիւնեանին էլ անհետացրին։ Զօրքը գնաց Մալիբէկլու, գիւղից դուրս կանգնեց, կանչեց ժողովրդին, ապա ցոյց տուեց ածխագործների ընկերներին, թէ սրանց մէջ ճանաչում էք ձեր ընկերների սպանողներին։ Հայերը պատասխանում են, ոչ։ Զօրքը վերադառնում է Խանքենդ։ Զը լսեց ոչ թնդանօթների և ոչ տուգանքի ձայն։ Միւս օրը ձերբակալեցին մի թուրք, ապա նորից արձակեցին։

Այս քանի օրերի իրականութեան մէջ կատարվածները իր իսկական պատկերով, բառ առ բառ, ներկայացրի ընթերցող հասարակութեան, առանց իմ կողմից մի բան աւելացնելու, դատողութիւն տալու, այդ թողնելով ընթերցողներին անելու, թէ իշխանութիւնը դէպի հայերը և դէպի թուրքերը որպիսի դիրք է բռնած։

***

ԹԻՖԼԻՍԻ ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Մայիսի 24-ին, երեկոյեան ժամի 7-ին քաղաքային Դումայի դահլիճում նշանակված էր Թիֆլիս քաղաքի կողմից Պետական Դումայի անդամ ընտրելու համար ընտրողների երկրորդ մասնաւոր խորհրդակցութիւնը, որ շարունակութիւն էր կազմում առաջինի։

Մասնակցում էին մօտ 60 հոգի։

Նիստը բաց արեց նախագահ Զաւարիձէ և, նախ քան հերթական հարցին անցնելը, կարդաց նախորդ խորհրդակցութեան յանձնարարութեամբ կազմված գրաւոր բանաձևը հետևեալ բովանդակութեամբ.

«Զը նայելով որ կառավարութիւնը ամէն ջանք գործ է դնում ստեղծել խուլիգանական Դումա, այնուամենայնիւ նա դուրս եկաւ միանդամայն օպպոզիցիոն։ Առաջ սոցիալ-դեմոկրատներն էին ասում՝ «Կորչի Դուման», իսկ այժմ ընդհակառակը՝ կառավարութիւնը։ Բայց մենք պէտք է պաշտպանենք այդ օպպոզիցիոն Դուման, որովհետև չենք ուզում գործիք դառնալ կառավարութեան ձեռքին ի վնաս նրա։ Այդ նպատակով մենք պահանջում ենք, որ Դուման ձեռք բերէ. բոլոր քաղաքացիական ազատութիւնները, իր համար կատարողական իշխանութիւն, որովհետև առանց դրան չէ կարող իրագործել այդ միջոցները, վերացնէ արտակարգ խստութիւնները, որոնք ուղղված են յեղափոխութիւնը ճնշելու դէմ, փոխէ ամբողջ ադմինիստրացիան, վերակազմէ զինուորական տնօրէնութիւնը, պահանջէ զօրքից հաւատարմութեան երդումն տալ նոր կառավարութեանը, պատժէ քաղաքացիական ու զինուորական յանցաւոր պաշտօնեաներին։ Իսկ նրա այդ բոլոր քայլերում սոցիալ-դեմոկրատիան եռանդուն աջակցութիւն պէտք է ցոյց տայ և մենք այդ կուսակցութեան բանւորական կազմակերպութեան պատկանող լիազօրներս պէտք է աջակցենք Դումային, պահպանենք նրա օպպոզիցիոն ոգին և այդ ուղղութեամբ էլ մանդատ-հրահանգներ ենք տալիս մեր ներկայացուցչին»։

Բանաձևի ընթերցումից յետոյ՝ մի քանի առարկութիւններ եղան, թէ պէտք է յիշել աֆիստին, պահանջել, որ ազատեն ազատութեան համար մարտնչողներին, բայց այդ առարկութիւնները աւելորդ համարեցին և բանաձևը քուէարկութեամբ ընդունվեց միաձայն։

Ապա խօսեց նախագահը, շեշտեց, որ ներկայացուցիչը անպայման պէտք է ենթարկվի տրված բանաձևերին։ Բայց կայ մի ուրիշ կա-

ռևոր հարց, որով շահագրգռված է կովկասեան սոցիալ-դեմոկրատիան. դա ազգային հարցն է։ Սոցիալ-դեմոկրատական երկրորդ համաժողովում, ինչպէս յայտնի է, մի քանի որոշումներ են կայացվել ազգային, կուլտուրական ինքնորոշման մասին։ Դրա հիման վրա կովկասեան սոցիալ-դեմոկրատական կոնֆէդերացիան այս տեղի համար որոշել է տալ շրջանային լայն ինքնավարութիւն և ստեղծել ընդհանուրի համար հիմնական օրէնքներ, վերապահելով իւրաքանչիւր ազգութեան կուլտուրական ինքնորոշման իրաւունք ազատ զարգացման համար։ Սա այդ որոշումները անհրաժեշտ են որ մեր ներկայացուցչի համար, իբրև խօսն ազգութիւնների ներկայացուցչի, աւելի պարզ լինի լուսաբանված ու հրահանգված։

Դրանից յետոյ սկսվեցին ճառախօսութիւններ այդ հարցի շուրջը։

Վարդանեան—Սոցիալ-դեմոկրատիայի վայելած մեծ հեղինակութիւնը, նրա յաղթանակը պէտք է վերագրել նրան, որ նա իր համար դէպիզ է ընտրել ազգութիւնների միութիւն առանց խորութեան։ Նրան մեղադրում են իբրև թէ նեղ, սահմանափակ հայեացքներ ու հակացողութիւններ ունի, բայց նա, ընդհակառակը, աւելի հեռու կերպով է լուծում ազգային հարցերը։ Միւս կուսակցութիւնները, ֆեդերալիստները, աւտոնոմիստները և այլն, վարագուրված են ազգանամոլութեամբ, նրանք բուրժուական կուսակցութիւններ են և ըստ կցիոն այժեր, մինչդեռ սոցիալ-դեմոկրատները առաջադիմական այժեր են։ Ապացոյց. առաջնին յարել են հոգևորականներ, ֆէոդալներ—ազնուականներ ու բուրժուաներ, իսկ երկրորդին՝ գիւղացիներ, պրոլետարներ։ Թոսելով այդքանը բուն խնդրի էութեան մասին, անցաւ «Դաշնակցութեան» գործունէութեանը և ապացոյց բերեց «Ալիք»-ի մօտիկ համարներից մէկում տպված «Գնդակ Աստուածը»։ Ապա ծափեր վաստակելու նպատակով փնտեց հակառակ կուսակցութիւնների անուրանալի օգտակար գործունէութիւնը ու իր ազեղ անվայելուչ ակնարկներով ինչ որ խծծանքներ էր անում ու իր մտաւոր անանկութիւնը երեւան հանեց, իսկ բուն ազգային հարցի մասին ոչինչ չասաց։

Նազարեան.—Երկու հակառակ այժեր ընդհարվել են իրար. հինը և նորը—ժողովրդները, որ այլ ևս չէ ուզում կեղեքված լինել, բանտերում ու Սիբիրում փտել։ Եւ այդ ընդհարման մէջ սոցիալ-դեմոկրատիան տատնվել է դեկավարի դերը ու իր դրօշակի տակ հաւաքել ազգութիւնները։ Բնականաբար առաջ է գալիս այդտեղ ազգային հարցը։ Ի՞նչպէս է հասկանում սոցիալ-դեմոկր. ազգային հարցը։ Նա ուզում է նրանց համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ նրանք համապատասխանեն հանրամարդկային ձգտումներին ու շահերին, իրաւիրատիայի մէջ, մարդասիրութեան, եղբայրասիրութեան սկզբունքներով։ Այդ տեսակէտից իւրաքանչիւրը պէտք է ասէ. կորչի ազգութիւնը, ձեռք մեկնէ իրար ու «պրոլետարներ միացէք» դեղիզով համախմբվել ընդհանուր ճշմամբ դէմ մաքառելու։

Եպեկեանը առաջարկում է անցնել կոնկրէտ հարցերին։

Վերմիշեան.—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագիրը համապատասխանում է սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ծրագրին. ազգային հարցում մենք բոլորովին համամիտ ենք։ Դա խնդրի վերաբերմամբ. գալով Վարդանեանի ճառին, կասեմ, որ նա շփոթում է բէվօլիցիոնների միտքը ընակցիոնների հետ։ Եթէ վերցնենք բուրժուային, նա ևս յեղափոխական տարր է կազմում։ Ազգային հարցը կեանքի անհրաժեշտ իրականութիւնից է բղխում, այդ պատճառով ազգային հարցերը ոչ միայն բէակցիոն ձգտում չը պէտք է համարել, այլ և մի քայլ առաջ գնացած կը լինենք, եթէ ձգտենք բաւարարութիւն տալ այն պահանջներին, որոնք արդէն հասունացել են։ Սոցիալ-դեմոկրատիան չասաց իր վերջին խօսքը կովկասեան ազգութիւնների բարեշինութեան համար, մինչդեռ ազգային կուսակցութիւնների հասցէին տեղում են անհեթեթ մեղադրանքներ. իւրաքանչիւրը դրանցից արժանի է յարգանքի չէ՞ որ ազգանվակութեան 95%-ը պրոլետարներ չեն և ունեն իրանց յատուկ պահանջները, որոնց պէտք է բաւարարութիւն տալ։

Այնուհետև խօսեցին մի քանի ճառախօսներ շեշտելով, որ Պետական Դուման պէտք է արմատախիլ անէ ազգային թշնամութիւնները և հաշտեցնէ բոլոր տարրերին, որ անհրաժեշտ է ունենալ լայն շրջանային ինքնավարութիւն տեղական հանգամանքների շնորհիւ։

Լիազօրներից մէկը փորձում է կարդալ հերթական հարցի առիթով «Շրօմայի» ֆելիէտօնը. քառորդ ժամից յետոյ ձայները հարկադրում են ընդհատել ընթերցանութիւնը։

Խօսք է խնդրում Խաչատեանը. սոցիալ-դեմոկրատիան, իմ սպասածիս հակառակ, ազգային հարցի մասին ոչ մի լուսաբանութիւն չը տուեց։ Զը տուեց լուրջ, գիտական ապացոյցներ այդ ՇԱասակարութեան ու օգտակարութեան մասին, ոչ մի քննադատութիւն չարեց աւտոնոմիայի և ֆեդերացիայի դէմ, չը որոշեց ինչպէս է հասկանում ազգային կուլտուրական ինքնորոշումը և այլն, մինչդեռ նա այդ հարցերին հէնց այժմ պէտք է պատասխանէ, որովհետև սպասում են նրանից թէ ինչպէս է նա ըմբռնում ազգային հարցը, որը բէակցիոն չէ կարող լինել հէնց այն հասարակ պատճառով, որ նա նպաստում է ազատ զարգացման ու ստեղծագործութեան։ Եթէ «միացէք պրոլետարներ» կոչը ընդդէմ կապիտալի հնչում է այդքան զօրեղ ու յաղթական կերպով, ինչու նրանք բէակցիոն տարրերին չեն յեղափոխում, զարգացնում. եթէ նա չէ կարող փոխել իրերի ընթացքը, անմտութիւն է այդ կոչը, եթէ դուք հնարաւորութիւն չունեք բաբեփոխելու կեանքը, ուզելու այդ բէակցիոն տարրերին, ինչու էք անուանարկում ուրիշներին, ուրիշ կուսակցութիւններին։ Այդ կոչը անկարող եղաւ բուժել Կովկասին և դուք չը կարողացաք տալ մինչև այժմ որևէ մի միջոց դրա համար։

Ղլիավա.—Ազգային հարցի, աւտոնոմիայի և ֆեդերացիայի մասին գրականութեան միջոցով քաւականին խօսվել է արդէն։ Ապում են իբրև թէ սոցիալ-դեմոկրատիան արհամարհում է ազգային հարցը, մինչդեռ նա ամենից աւելի է շահագրգռված այդ հարցով, ազգային պահանջներին բաւարարութիւն տալու խնդրով և դա ամենքն, որքան որ անհրաժեշտ է աշխատաւորների շահերի տեսակէտից։ Երբ ասում են ազգային հարցը բուրժուական է, դա ուղիղ է։ Պրոլետարը շահ չունի հակառակ ընթանալու ուրիշ ազգութիւնների պրոլետարներին, ազգային թշնամանացումներ ստեղծելու, բայց դրանով շահագրգռված են բուրժուա տարրերը և ստեղծում են ամենատա տարբերը և ստեղծում են ազգային հարցեր իրանց շահերը քօղարկելու համար։ Եւ սոցիալ-դեմոկրատիան հասկանում է. քանի կապիտալիստական կարգը կանգուն է, պրոլետարը չէ կարող լուծել ազգային հարցերը, բայց նա նրանով շահագրգռված է այն չափով, ինչ չափով որ նա արդէն է հանդիսանում պրոլետարիատի առաջնորդողութիւնը։ Ընդհանուր այժի, գերիշխող ազգութեան կեղեքիչների արգելքներ ծագում են ազգային հարցերը։ Այդպիսի դէպքերում սոցիալ-դեմոկրատիան պաշտպան կը հանդիսանայ ազգային հարցին և եթէ ազգային ձգտումների մէջ կան շահեր արժանի պաշտպանութեան ՇԷՐՆՔ պաշտպանում են։ Բոլոր հանգամանքներում մեզ դեկավարում են աշխատաւորի դասակարգի շահերը։ Ինքդրնքով սոց.-դեմոկրատիան որոշ լուծում չէ տալիս ազգային հարցին և ոչ էլ դէմ է աւտոնոմիային կամ ֆեդերացիային։ Նա այդ հարցին վերաբերվում է ժամանակի և տեղի համաձայն։ Հէնց այդ տեսակէտով Կովկասի տեղական պայմանները մեզ թելադրում են դէմ լինել աւտոնոմիային, ֆեդերացիային, որովհետև նրանք չեն կարող խնդարել ընդհարումները, թշնամութիւնները և գոնացնել մեր ծրագիրները։ Սոցիալ-դեմոկրատիան սկզբունքով ազգայինքաղաքական աւտոնոմիային դէմ չէ, իմ կարծիքով։

Բայց եթէ սոցիալ-դեմոկրատիան այստեղ այսպիսի յաղթութիւն տարաւ, դա միմիայն շնորհիւ իր լայն, այլ ոչ նեղ ազգայնական ձգտումների, և ով կարծում է, որ կարող կը լինի յենվել ընտրեալների ազգայնական գերակշռութեան վրա ու շահագործել նրանց, շատ սխալվում են, այդ նրանց չի ազողվի։ (Ծափահարութիւններ)։ Դրանից յետոյ ընդունվեց հետևեալ բանաձևը.

«Սոցիալ-դեմոկրատիայի նպատակը ազգային հարցի լուծման մէջ կայանում է նրանում, որ առանց սպասելու սոցիալիզմի արմատական լուծմանը և կապիտալիստական հասարակութեան սահմաններում, պակասեցնէ ազգութիւնների թշնամութիւնները, ներմուծէ նրանց մէջ իրաւունքների լիակատար հաւասարութիւն և այդպիսով աւելի մերկացնէ դասակարգային հակասութիւնները և նպաստէ դասակարգերի կռուին։ Ուստի մենք առաջարկում ենք մեր ներկայացուցչին Դումայում կողմնակից լինել այն միջոցներին, որոնք հասցնէին մեզ այդ նպատակին։ Իսկ ինչ վերաբերում է ժամանակաւոր այդ հարցի լուծմանը Կովկասում, որտեղ ազգային յարաբերութիւնները սատիկ բարդ ու խճճված են, մենք պահանջում ենք, որ ոչ մի ազգ չը լինի արտօնեալ միւսի վերաբերմամբ, որպէս զի իւրաքանչիւրը նրանցից, որքան հնարաւոր է, վայելէ ընդարձակ իրաւունքներ իր կուլտուրական զարգացման համար։ Այդ նպատակով մենք հարկաւոր ենք համարում, բացի լայն տեղական ինքնավարութիւնից, մտցնել նոյնպէս միջազգայնական շրջանային ինքնավարութիւն, որի նպատակը լինէր կանոնաւորել երկրի կուլտուրական-սոցիալական կեանքը համաուսական օրէնսդրութիւնների սահմաններում»։

Բանաձևի առիթով Խաչատեանը նկատեց, որ նա պէտք է լինի կազմված ոչ թէ սոցիալ-դեմոկրատիայի անունից, այլ Թիֆլիսի լիազօրների։

Այդ նկատողութիւնը արդարացի ճանաչվեց ու բանաձևը ընդունվեց Թիֆլիսի լիազօրների անունից միաձայն։

Յետոյ ժողովը զբաղվեց Դումայի անդամի թեկնածութեան հարցով։

Գ. Խաչատեանը յայտնեց, որ ժողովրդական ազատութեան կուսակցութիւն կողմից լիազօրութիւն ունի յայտնելու, որ իրանք պաշտպանում են Նոյ ժորդանիի թեկնածութիւնը։ Ժողովը բուռն ծափահարութեամբ ընդունեց այդ յայտարարութիւնը և միաձայն ընտրվեց թեկնածու Նոյ ժորդանիայ։

Ապա ժողովին զեկուցվեց լիազօրներից մէկի՝ գործակցապար Գրիբոյեդի կալանաւորութեան մասին։ Վճռվեց քաղաքագլխի միջոցով խնդրել գեներալ-նահանգապետին ազատել նրան, մայիսի 26-ի համար գոնէ։ Հակառակ դէպքում այդ մասին Դումայի անդամներից մէկի միջոցով բողոքել Դումային։

Խօսողներ եղան հանդիսականներից, որ պէտք է խնդրել բոլոր գործակատարների համար և ոչ թէ միմիայն մի լիազօրի համար։

Նիստը վերջացաւ գիշերվայ ժամի 1-ին։

Հայ-Թուրքական յարաբերութեան մասին ոչ մի բառաձև չը կայացաւ. ուստի վճռվեց մայիսի 26-ին հաւաքվել, ժամի 7½-ին, որպէսզի գոնէ 2 ժամ հնարաւոր լինի զբաղվել, լուսաբանել ու որոշ բառաձև կայացնել այդ պատճառով և հրանգ տալ Թիֆլիսի ներկայացուցչին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Պետական Դուման անդամ Կարպից ընտրվեց մի մահմեդական Զաքարբեկ Ազարովին։ Ընտրութիւնների անկանոն կատարվելու պատճառով բողոք է ներկայացված։

(Ռ. գրծ.)

Քութայիս. 24 մայիսի։ Պետական Դումայի անդամ Քութայիսի նահանգի կողմից ընտրվել են թիֆլիզ Գամարդեյ, երդուեալ-հաւատարմատար Զապարիձէ և ուսուցիչ գիւղացի Բամիշվիլի, բոլորն էլ սոցիալ-դեմոկրատներ։

(Հեռ. գրծ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻ ՀՆԱՍՎԱԾ ԳԻՒՂԵՐԸ

(Առաքեալ Քալանթարի)

Գաւառապետը մնում է Ֆրէզովկայում, իսկ 20 կօզակ և 5 սարժանիկներին յանձնայն դէպս ուղարկում է Բաղաքնդ ստուգելու, և ինչ է դուրս գալիս... Կօզակների և սարժանիկների աչքին ներկայանում է հետևեալ պատկերը։ գիւղը լցված ահագին քանակութեամբ թուրք խուժանով, որոնք եկել են այլերով, անասուններով և ամենահանդիսաւոր կերպով բանում են անասունները ցորենով, գարիով և այլն, կամ տան կառ-կարասիքով, որ տանեն իրանց համար։ Թուրքերը հէնց որ նկատում են կօզակներին և սարժանիկներին, սկսում են հրացաններից կրակել սրանց վրա և ոչ մի կերպով մօտ չը թողնել գիւղին։ Կօզակներին հրամայված է լինում չը խառնվել ընդհարումների գործին. չը նայած սարժանիկների կոչին հետամուտ լինել խուժանին, կօզակների գլխաւորը հրամայում է դառնալ և գալիս հասնում են Ֆրէզովկա, պատմում եղելութեան մասին—ճաշելուց յետոյ գաւառապետը վերադառնում է նորից Զարդալոյով Գանձակ։

Այդպիսով հաստատվում է, որ գիւղի աւերումը ոչ թէ պատահական մի բան է, այլ նախօրօք մտածված և ծրագրված գործ։ Զը նայելով այս բոլորին, այդ բանը չեն կարողանում մինչև այժմս էլ ըմբռնել բաղացիների մի մասը և արդէն այժմեանից էլի սկսել են իրանց բարեկամութիւնները շարունակել «քիրվա» թուրքերի հետ։

Բաղաքենդը ունեցել է 241 կամերալ կամ 400 ծուխ մատալ ուտող, մօտաւորապէս 2700 հոգի երկու սեռի պարապվում են եղել հաւասար չափով հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ գիւղը գլխաւորապէս կենտրոնացած է եղել սի տեղ, բայց որովհետև գիւղացիները զբաղվում են եղել անասնապահութեամբ մեծ ծաւալով, ուստի գիւղից դուրս սարի լանջերում և ձորերում կազմվել են համախմբումներ, որոնք սկզբում ձմերանոցի բնաւորութիւն են կրում եղել, իսկ հետոյհետ չէնացել են և դառել արդէն գիւղակներ։ Անցեալ տարվայ աշնանը քոչը վերադառնալուց յետոյ, գիւղացիք վախեցել են այդ տեղերում ապրել և հաւաքվել են գիւղը։

Գիւղը ունի 3052 դեսեատին հող, որը ամեն տարի բաժանվում է երեք մասի։ Ամեն տարի վարելու համար թողնվում է 1000 դեսեատին թէ աշնանացանի և թէ գարնանացանի համար, 400 դեսեատին խոտհարքի համար և 1652 դեսեատին արօտատեղի։

Այդպիսով նրանց հողերի մի երրորդ մասը ամեն տարի պառող է բերում, իսկ երկու երրորդականը հանգստանում է—այդ տեղերից օգտվում են իբրև արօտատեղի և խոտհարք։

Աւելորդ չեմ համարում այստեղ յիշատակել խրանօլօգիական կարգով բոլոր այն աշխատանքները, որոնք գիւղացիք կատարում են գարնանից սկսած մինչև աշունք։

Գարուանը սկսվելուն պէս—մօտաւորապէս մարտ ամսից, սկսում են արդէն գարնանացանները, մշակել ցորենը, գարին, հաճարը, կտաւահատը և այդպէս շարունակվում է մինչև ապրիլի վերջը։

Այդ ժամանակամիջոցում պարապվում են այգինները, ցանվում կորէկը։

Որովհետև այդ տեղերը անջրդի կամ դէմի են, ուստի անհրաժեշտ է գարնանից, երբ հողը դեռ չէ պնգել, ցեղերը վարել, օրպէսզի հողը ամբողջ ամառը մնալով արևի տակ պատրաստ լինի աշնանացանի համար։ այդ աշխատանքը կատարվում է մայիս ամսին և շարունակվում է ամենաուշը մինչև յունիսի 10-ը։

Յունիս ամսին վերջանում է խոտհարքը։

Յուլիսին վերջանում է հունձը։

Օգոստոսին կատարվում է կալը, որ շատ անգամ շարունակվում է և սեպտեմբերին։

Սեպտեմբերից սկսվում է վարելը և շարունակվում է աշնանացանը։

Այդ ժամանակներն էլ տեղի է ունենում և այգեկութը։

Շնորհիւ գիւղի գիրքին և արօտատեղիների լաւութեան, բաղացիները պարապվում են եղել մեծ չափով անասնապահութեամբ. այսպէս օրինակ եղել են գիւղացիներ, որ ունեցել են 200—300 գլուխ տաւար կամ 1500—2000 գլ. ոչխար։ Ինձ չայոդվից մանրամասն ստատիստիկական տեղեկութիւններ ցանալ, թէ որքան անասուն է եղել գիւղում, միայն եղներ եղել են մօտաւորապէս 2500 գլուխ. դրանից կարելի է եզրակացնել թէ 400 ծուխ գիւղքաղաքի է եղել ունենալ։ Ամառը այդտեղ (թէև վերջերս ստիքան էլ չեն ցանում) և 100—150 դես. էլ կարտոֆիլ, կտաւահատ և այլն կամ ամեն մի ծուխը տարեկան ունենում է 2½—3 դես. ցանքեր։

Բաղա գիւղի և մասամբ էլ Ֆրէզովկայի հողերը բարեբեր և լաւ հողեր են. պարունակում են իրանց մէջ բաւականաչափ սեահող։ Գիւղի գիրքը թէև բարձր է և դէմի, որովհետև հողերի մեծ մասը հարաւային թեքվածք ունեն, ուստի աւելի պղտատու և բերքով են քան շրջակայ գիւղերի հողերը։ Բաղայի հողերում այսպէս օրինակ դեսեատինի վրա սերմում են 8—10 պուդ և ստանում են ամենաառատ տարին մօտ 50 պուդ, իսկ լաւ բերքի ժամանակ տարին 120 պուդ. այնպէս որ միջին թիւով 60—80 պուդ. մինչդեռ շրջակայ գիւղերում ստացվում է միջինը 50—60 պ., գարին սերմում են 10—12 պուդ, ստանում են միջին թիւով 100—120 պ., կորէկը սերմում են 2—3 պուդ, ստանում են 200—250 պուդ։

Գիւղը ունեցել է և խաղողի այգիներ։ Լիներով աշխատաւոր և միջնոյն ժամանակը ունենալ մարդիկ, գիւղացիները չեն խնայել իրանց աշխատանքը, փողը և երկար չարչարանքներով կարողացել են ձորերի մէջ խաղողի և պտղատու ծառերի այգիներ գցել, մօտաւորապէս 180 դեսեատին, որոնք գիւղացիներին տալիս են եղել բաւականաչափ օգուտ—այնպէս որ բացի նրանից, որ գիւղացիք իրանց պիտոյքներին քաւարարութիւն են տալիս եղել, այլ և մեծ քանակութեամբ ծախում շրջակայ թուրք գիւղացիներին։ Բայց թուրք խուժանը էլ կարողացել իր սուր խնամիները գցել այդ դէպքումն էլ և մի հարուածով վերջրել փչացրել է այն նպաստաւոր տաժանակիր կուլտուրական աշխատանքը, որը ինքն անընդունակ է ստեղծել։ Կորտել, ոչնչացրել են բոլոր պղտատու ծառերը, իսկ խաղողի վազերը մասամբ ՇԱՅՍՆ։

Շնորհիւ գիւղի գիրքին և արօտատեղիների լաւութեան, բաղացիները պարապվում են եղել մեծ չափով անասնապահութեամբ. այսպէս օրինակ եղել են գիւղացիներ, որ ունեցել են 200—300 գլուխ տաւար կամ 1500—2000 գլ. ոչխար։ Ինձ չայոդվից մանրամասն ստատիստիկական տեղեկութիւններ ցանալ, թէ որքան անասուն է եղել գիւղում, միայն եղներ եղել են մօտաւորապէս 2500 գլուխ. դրանից կարելի է եզրակացնել թէ 400 ծուխ գիւղքաղաքի է եղել ունենալ։ Ամառը այդտեղ այնքան զով է լինում, որ գրանք կարիք չէին ունենալ պիպանոց կամ եայլաղ գնալու, եթէ հնարաւորութիւն ունենային կատարվել եղած արօտատեղիներով։ Այսպէս օրինակ գրանց գիւղի սահմանակից հողերը, որոնք առաջ արքունական հողաբաժիններ էն եղել, ծառայում էին թուրքերի համար իբրև եայլաղ։ Բաղացիները պահում են եղել թէ խոշոր և թէ մանր կենդանիներ, մեծ մասամբ տեղական տեսակի, իսկ ոչխարները մերինոս տեսակից սկսել են միայն վերջին ժամանակներս պահել, թէև գանգատվում են, որ այդ տեսակը աւելի մեծ տոկոս մահացութիւն ունի, աւելի դիւրին է ենթարկվում հիւանդութիւններին, քան տեղականները և շատ հասկանալի պատճառներով։ Առհասարակ այստեղ էլ, այս շրջաններումն էլ նկատելի է այն հանգամանքը, ինչ որ միւս հայկական շրջաններում, որ չը նայած նրան, որ այդ գիւղերը մօտիկ կամ սահմանակից ունեն գերմանական կամ դուխաբորների աւաններ, բայց հայերը ներմուծութիւններ շատ դանդաղ են ընդունում, թէև թուրքերի հետ համեմատած աւելի են առաջադէմ։

Բացի վերոյիշեալ փակտորներից, հողերի բաժանումը նոյնպէս նպաստում է եղել գիւղի հարստանալուն։ Բաղայում հողերը բաժանում էին, նայած կարիքին, ամեն մի 5—6 տարին մէկ անգամ, վիճակով, բացի այդ էներից, այնպէս որ միշտ փոփոխելով հողաբաժինները, ամեն մի գիւղացին հնարաւորութիւն ունի և լաւ և համեմատաբար վատ հողաբաժին ունենալու մշակութեան համար։

Ահա մօտաւորապէս բոլոր այն պայմանները՝ թէ ինչու Բաղա գիւղը այնքան հարուստ է եղել շրջակայ ազգաբնակութեան մէջ։

Բաղա գիւղը արտանանում էր ահագին քանակութեամբ ցորեն և գարի Զեգամ կայարանը, որտեղ ծախում էր կօմիսիոներներին։

Գիւղը իր արտաքինով նմանում է եղել գիւղաքաղաքի իր հոյակապ երկյարկանի տներով, խանութներով և նիստ ու կացով, ունեցել է ուսումնարան և ահագին քանակութեամբ ուսում առած մարդիկ։ Այսպէս օրինակ մի մարդ իր տանը ունեցել է գրքեր մի քանի հարիւր բուրլու։ Ընդհանրապէս այս գիւղը եղել է օրինակ շրջակայ գիւղերի համար։

Գիւղի ճեռկան

Բաղաքենդի վրա յարձակումը կատարվել է Գանձակի դէպքերից յետոյ։

Դեռ յարձակումից մի քանի օր առաջ գիւղի հարուստ Շուշանօվի ոչխարները, մօտ 1500 գլուխ, գիշեր ժամանակ փախցնում են։ Պարզվում է, որ այդ գործը կատարում է Աշղաբ Այրլուի գիւղական հասարակութեան տասնուհէր Աբաս-Ալիի կնի Փիրիա Ղարաղան զգին. նա ճանաչում է, որ այդ Շուշանօվին է պատկանում, հրամայում է իր ղղիներին, որ նրանք թոյլ չը տան ոչխարները տանել։ Ողղիները այդ հրամանը կատարում են, պահում են իրանց մօտ, որ վերադարձնեն Շուշանօվին։ Բայց դրանից յետոյ անցնում է մի քանի օր, Բաղան աւերվում է և Համզաեվները Թրմաշլուեցի Մէհդի-Ասան Մէհդիի Ղասում օղլու և միւսների հետ գալիս են նորից խլում թուրքերից ոչխարները և տանում։ Բացի այս դէպքերից եղել են մի շարք մանր յարձակումներ, որոնք պիտի գիւղացիներին խելքի բերէին և մտածէին իրանց դլխի ճարը տեսնել, բայց ինչպէս վերևը ասացի՝ այս մարդիկ այնքան տարված են եղել, այնքան մեծ հաւատ են ունեցել դէպի իրանց «քիրվաները» և Զուլղադարօվը, որ ոչ մի միջոց չեն ձեռնարկել։

Մինչև անգամ ասում են, որ շրջակայ հայ գիւղերից օգնութեան եկած մարդկանց նրանք չեն ընդունել, վախենալով, որ մի գուցէ թուրքերը իմանան և նրանց հետ «վատ վարվեն»։ Ցաւենայն դէպս, եթէ այս վերջին հանգամանքը տեղի եղած էլ չը լինի, հարցը պարզ է, փատը մնում է փատ, որ նրանք մինչև այդ ոչ մի պատրաստութիւն չեն տեսել և նախազգուշութիւն չեն գործադրել և այդ պատճառով էլ գիւղը փչացրել ու կորցրել։

Յարձակում գործել են, գիւղի արևելեան մասի վրա, Թրմաշլուի կողմից, այսինքն այն տեղից, ուր համեմատաբար սարահարթ է և հեշտ է բարձրանալ և մտնել գիւղը, իսկ միւս մասերում որովհետև ձորեր են, մմիմայն մի քանի մարդիկ հրացաններով, հակառակ լանջերից շփոթութիւն են առաջացնում եղել։ Երբ որ գիւղացիք բոլորն էլ համոզվում են, որ այլ ևս թուրքերի վրա յոյս դնել պարզիւն է, ձեռնարկում են դիրքեր կառուցանել, որպէսզի գիմադրեն։ Ոչ օրի մօտ կարգին հրացան չէ գտնվում, բոլորն էլ չամամաւոր թվանգներ են լինում, ոչ մի գիսցիպլինա, ամեն մարդ անում է եղել այն ինչ ուզում էր, առաւել ևս, որ այդ բոլորովին էլ գտնվել են մարդիկ, որոնք կեանքի հիւանդագին երևոյթները՝ յափշտակութիւն, թալան, սպանութիւն շարունակվում են։ Ձեր կողէքով, ձեր դատողութեամբ, պէտք է այս բոլորովին ոճիրները, եթէ ոչ բոլորովին աքսորված, գոնէ հազուադէպ լինէին զինուորական կոշկի տակ հեծեծող Ռուսաստանում։

Բայց տխուր ու պերճախօս իրականութիւնը ցոյց է տալիս, որ սպանութիւնները, ոճիրները, յափշտակութիւններն ու թալանները խոր արմատներ ունեն ժողովրդի տնտեսական-քաղաքական և սոցիալական կազմակերպութեան մէջ, որ առանց նրանց արմատները չարացնելու, չէ կարելի ոչնչացնել նրանց՝ յանելով միայն ճիւղերը։ Պատիժը ճիւղերի յօտում, մկրատում է միայն, որի անխուսափելի հետևանքն է լինում աւելի ոյժ տալ արմատին, աւելի անզուսպ թափով ծառացնել նիհար, թոյլ ճիւղերը։

Պատիժը մի խօսքով խփում է արդիւնքին և ոչ թէ պատճառին։ Ուզում էք ջնջել կեանքի հիւանդագին երևոյթները, ջնջեցէք այն պայմանները, որոնք ծնունդ են տալիս նրանց։ Փոխեցէք կեանքը, տանջանք գաղձած ժողովրդի տնտեսական-քաղաքական-հասարակական պայմանները։

Արդ, հայ-թուրքական դաւանները իրանց անծայր թշուառութիւններով, իրանց նիւթական ու բարոյական տարսափելի այլանդակութիւններով մի այնպիսի հող են ներկայացնում, որի վրա կարող են բուսնել ոճրի թունաւոր ծաղիկները միայն։

Դարձեալ հարցնում եմ ձեզ, ինչ անէ մի ժողովուրդ, որը նահատակվել ու նահատակվում է ոչ միայն իր վրա ծանրացող փէոդալական բիւրօկրատական ուժիմից, այլ աւելի սոսկալին, քանվել, մոլիրի դիպ է նրատել փոխադարձաբար միմեանց գլխին շղոցրած սուրը՝ ու ՇՐԱԿՎԵՐ։

Այդ ողբալի արարածների վրա կարելի է միայն գթալ, սրտապատառ ու անհուսօրէն լաց լինել։

Դժոխային պատկերը ամբողջ չէ դեռ։

Այդ ժողովուրդը, որը պապակում է նիւթական ու բարոյական հանգստի, այդ ժողովուրդը, որ վերածնվելու, նորմալ կեանքի մէջ մտնելու համար հարիք ունի եղբայրական օգնութեան, իր առաջ ցցված է տեսնում հակայնապտիսութեան սև ուրուականը։

Նրան ասում են, ինչպէս պատանական հրէայնն, ասում են հաղթաթաւոր բերաններով.

—Քայլիր, քայլիր ոճրի ու արիւնի մէջ, քայլիր եղբայրասպան կուի կարմիր դաշտում, քայլիր, որովհետև դեռ յեղափոխութիւնը չէ ընկճվել Ռուսաստանում, քայլիր, որովհետև Պետական Դումայի պատերազմի ձեռնոցներ է շպրտում բիւրօկրատներիս, քայլիր, որովհետև նորից արիւնի ու վառօդի հոտ է գալիս հիւսիսից։

Ու այդ խելագարջոր ու փոխադարձ ատելութեամբ ելեկտրականացած մասսան քայլում է, քայլում է կամայ, ակամայ, որովհետև նա իր հանից լսում է ոչ միայն հարիւրաւոր պրօլոկատոր բերաններով արտասանված «քայլիր»-ը, այլ «քայլիր»-ը թշուառութեան, քաղցի, ազգային խեղաթար թշնամութեան։

Ահա դրութիւնը, հայ ու թուրք ժողովուրդների անօրինակ ու անդրակիր դրութիւնը։

Եւ ինչ ենք տեսնում այդ դրութեան առաջ։ Մեղադրանքների, վիրաւորանքների, լուսանքների մի ամբողջ հրաբխոյթ։

Մեղադրանքներ՝ հայերի դէմ։

Հայերը մեղադրում են զոհերին։

Իսկ զոհերը քրքջում են, որովհետև, c'est le comble!

Հայ թղթակիցը, գրողը չէ կարողանում չը խարանել «դաւաճան», «քարբարոս» թուրքին, իսկ թուրք թղթակիցը, գրողը չէ հանդատանում առանց մտրակելու «ենկամտա», «խարդախ», «եղեռնագործ» ու «յեղափոխական» հային։

Հայ մամուլը զայրոյթով, կատաղութեամբ արձանագրեց վերջերս հայերի գերութեան ու խողխողումի գարշելի փատը, Նէլպա-Շուշու ճանապարհի վրա։

Թուրք մամուլը վրդովմունքով, մոլեգնութեամբ խօսեց մի քանի թուրք քաշչորների գերութեան նոյնքան գարշելի փատի մասին։

Հայ մամուլը որտաց le coup la tartare-ը։ Իսկ «Իրաղում» տպվեց «Երկու վատներ»-ը։ Առաջին վատնգը շեյխանի կառավարութեան պրովոկացիան, որ քաղաքական փոթորկի ճնշման տակ դիմում է խ. ծանոթ տակտիկային՝ բանկցնել եղբայրասպանութիւնը։ Իսկ երկրորդ վատնգը «Դաշնակցութիւնը», որը անհատական սպանութիւններից ձեռք չէ քաշում և տալիս է ընդհարումներին։

Հարուածը հրաւիրում է հարուած։

Զոհերը զբաղված են մեղադրելով, դատապարտելով միմեանց, իսկ դահիճները քրքջալով կոշորդալիր։

Ո՞ւր է սրա վերջը։

Եթէ միմեանց զինաթափ անելու, թուրքական զբաղդութիւնների մասին պատրաստելու փոխարէն սառնարիւնութեամբ վերարարքի փոխարէն վշտով, թշնամութեան փոխարէն եղբայրութեամբ հասկանալու համար, հայ մամուլը պէտք է սոսկալի մի էջ բանալ. «Թուրք մարտիրոսագրութիւնը», իսկ թուրք մամուլը՝ «Հայ մարտիրոսագրութիւնը»։

Ե՞րբ արդեօք երկու ժողովուրդները, նրանց գլուխները՝ մամուլը և գործունէութեան մէջ, անդնդի մի անսահման կորստեան պէտք է մտնեն միմեանց ողբերգական գրութեան մէջ, անդնդի ու անսահման կորստեան պէտք է փայփայեն միմեանց գրկեն ու միմեանց ատնված, կամաձայն գիտակից հոգու վրա խաչագրաստանված՝ պէտք է մրմնջան.

—Մենք ապրել ենք նոյն հողի վրա, [illegible] ենք և մենք պիտի ապրենք մի և նոյն հողի վրա. մենք միշտ այժմ միմեանց տեսանք միմիայն թշնամին, դահիճը. մենք սառապրած ենք նոյն ցաւով, մեռնում ենք նոյն ատաւոր ու գարշելի տանջանքներով—միմեանց չը հասկանալուց։

Տ. Զաւ[illegible]

ՄԱՆՈՒԱՆ ՊԱՏԻԺԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ

Մանվան պատիժը վերացնելու օրէնքի նախագիծն էլ մանրամասն քննվեց Պետական Դումայում և յանձնվեց յատուկ յանձնաժողովի։ Նրան աւելի լաւ մշակելու համար։ Մեզ դուրս է գալիս, որ մանվան պատժի վերացնելու մասին գը յատուկ յանձնաժողովի յանձնելը հանդիսանում է միայն կողմից մի աւելորդ քաշքշոցի և մանանի կորուստ է միայն, որովհետև հարցը մայում, այդ խնդիրը քննելու ժամանակ լվվեց և ոչ մի ձայն, որը կողմնակից լինի և պաշտպանէր այդ «մանվան պատիժ» անունով կոչված մարդասպանութիւնը։ Ուրեմն ինչ կարող է աւելացնել յատուկ յանձնաժողովը այն բոլոր պերճախօս գատավճիռների վրա, որ տրվեցան այդ այլանդակի դէմ խօսող հանրօրէների կողմից։

Վստահութեամբ կարելի է ասել, որ [illegible] խնդրի մէջ Դումայի պատգամաւորները [illegible] ճշգրիտ արտայայտիչներ ու թարգմանները [illegible] մանվան պատիժը վերացնելու խնդրի չէին ամբողջ երկրի, ամբողջ ժողովրդի [illegible] ցանկութիւնների ու ձգտումների, պէտք է մանվան պատիժը վերացնելու խնդիրը։ Եւ յիրաւի, ով կարող է այդ ափաշիկ մարդասպանութեանը կողմնակից լինել, մանաւանդ Ռուսաստանում, որտեղ քրիստոնէական մէջ անգամ մանվան պատիժը գոյութիւն չունի։ Ինչպէս յայտնի է, քրիստոնեաների տեսակէտից, Ռուսաստանը [illegible] աւելի կուլտուրական ու մարդասէր է [illegible] մարդասէ

այլ միջոցներով։ Իսկ մեր երկրում ամենամեծ եղեռնագործին անգամ օրէնքը մահվան պատիժ չէ անօրինում։ Եղեռնագործներին քանարկում են, աքսորում են, տաժանակիր աշխատանքների են ուղարկում, ամենավատ պայմանների մէջ են պահում, բայց և այնպէս նրանց չեն զրկում կեանքից, ապրելու յոյսից։ Ռուրգարդ աքսորականի մէջ միշտ վառ է մնում այն յոյսը, թէ մի օր նա կը կարողանայ փախչել կամ մի որևէ մանիֆեստի շնորհով և կամ մի այլ հրաշքով ինքը կարողանայ ու կրկին կանգի մէջ կը մտնի։

Եւ այսպիսի մի մարդասէր օրէնսդրական երկրում տասնեակ հարիւրներով կախում, հրացանի են բռնում այնպիսի մարդկանց, որոնք ոչ միայն զոհեր, աւազակներ, ու մարդասպաններ ու ոճրագործներ չեն, այլ և երկրի ամենաթարմ, ամենալաւ, ամենամաքուր զաւակներն են, որոնց արիւնարբու բիւրոկրատիան «քաղաքական յանցաւորների» անունով է նկրտում և նրանց համար յատուկ օրէնքներ մշակում ու մահվան պատիժներ տնօրինում։

Ոչ– դա օրէնք չէ, դա մի կատաղեալ կօրսիկան վանդեttա է, որ բիւրօկրատիան հնարել է վրէժ առնելու համար այն բոլորից, որոնք ըղդրում և կուում են իր աւազակութիւնների, կամայականութեան, բռնութիւնների և ամեն կարգի խայտառակութիւնների դէմ։ Եւ որովհետև ներկայումս ամբողջ ժողովրդի աչքերը արդէն բացվել են և բոլորն էլ այժմ բիւրօկրատիայից պահանջում են հեռանալ ասպարէզից, ուստի մահվան պատիժը այսօր մի զէնք է կառավարութեան ձեռքում սարսափեցնելու ամբողջ ժողովրդին, լռեցնելու ու խեղդելու նրա արդար բողոքի ձայնը։

Կառավարութեան անպատկառութիւնն ու ցինիզմը այն ատիճանի է հասել, որ նա մինչև անգամ չը քաշվեց Պետական Դումայում, ժողովրդի մի քանի հարիւր ներկայացուցիչների առաջ բացարձակապէս յայտարարելու, որ այժ, մահվան պատիժը իր համար մի վանդեատա—վրէժխնդրութեան մի զէնք է իր հակառակորդներին ահաբեկելու, սարսափեցնելու համար, և որ նա այդ զէնքը վայր չի դնի իր ձեռքից, քանի որ ժողովրդի մէջ հակառակարգչական շարժումները կը շարունակվեն։

Այս անպատկառ յայտարարութիւնը անհոլով, Գօրեմիկինի կառավարութիւնը, ինչպէս երևում է, ինքն էլ զգաց իր ցինիզմի չափազանց լինելը, ուստի իսկոյն մի փորձ արեց նրան փոքր ինչ մեղմացնել, բայց այդ փորձը նրան աւելի վատ, յիմար դրութեան մէջ զբրեց և աւելի ևս լուսաւորեց նրա այլանդակ դէմքը։ Մինիստրին յիմար դրութեան մէջ գցող փորձը այն էր, որ նա իր ցինիկ յայտարարութեանը մի առանձին ապլոմբով կցեց և այն, որ ժողովուրդն բազատիս հեռագրերով խնդրում և պահանջում է կառավարութիւնից, որ մահվան պատիժը չը վերացվի...

Հասկանում էք արդեօք, թէ ինչ է նշանակում մինիստրի այս յայտարարութիւնը։ Ամբողջ ժողովրդի ներկայացուցիչների առաջ, (գունէ բիւրօկրատիայի հակացողութեամբ, ներկայ Դուման ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներ ժողով է համարվում), այն ներկայացուցիչների, որոնց Կայսրը «Ռուսաստանի ամենալաւ մարդիկը» անուանեց, և որոնք ամբողջ ժողովրդի բոլոր ցանկութիւնների, խղճերի, ձգտումների և մտածողութիւնների ամենալաւ արտայայտիչները պիտի համարվեն, այդ իսկ ներկայացուցիչների առաջ, ասում ենք, մինիստր Գօրեմիկինը, առանց մտածելու և առանց կարմրելու, ասում է, թէ այն ժողովրդից զատ, որին դուք այստեղ ներկայացնում էք և որի ցանկութեան համաձայն, մահվան պատիժի վերացումն էք պահանջում, կայ և մի այլ ժողովուրդ, որը կառավարութիւնից խընդրում է՝ ձեզ էլ ևս լռել և, հակառակ ձեր կամքի ու պահանջի, պահել մահվան պատիժը։

Տեսնում էք ինչպիսի գոհարներ են դուրս տալիս գլուխը կոցրած մեր մինիստրները, տեսնում էք ինչպիսի հասկացողութիւն ունի բիւրօկրատիան ժողովրդային ներկայացուցչութեան, օրէնսդրական ժողովի, պարլամենտի և այլ այդ կարգի ոչ բիւրօկրատական հիմնարկութիւնների ու կարգերի մասին։ Այդ ղղորելիները չեն հասկանում ու չեն էլ զգում, որ ժողովրդի անհատական կարծիքների հիման վրա օրէնք փոխելու և նոր օրէնք յայտարարելու ձևը բեֆերենդում (refferendum) է նշանակում, որից մեր բիւրօկրատիան, ինչպէս և բոլոր բիւրօկրատները, այնպէս է վախենում, ինչպէս մուկը կատուից։ Ի՞նչ կը լինի մեր բիւրօկրատիայի դրութիւնը և ինչպէս կը վերաբերվի Գօրեմիկինը, եթէ Պետական Դուման նրան առաջարկէ բեֆերենդումի գաղափարը։ Ոչ միայն մահվան պատիժի օրէնքը, այլ հենց Ռուսաստանի ինչպիսի կառավարական ձև ու կարգեր հաստատելու խնդիրը։ Օրինակի համար, Ռուսաստանի ամբողջ ժողովրդին մի այսպիսի հարց տրվէր, ինչպէս սովորաբար անվում են բեֆերենդում եղած երկրներում,—«ցանկանում էք արդեօք, որ ամբողջ բիւրօկրատիան, վերևից մինչև ցած, 48 ժամվայ մէջ Սիբիր աքսորվի»։

Երևակայում ենք արդէն, թէ պ. Գօրեմիկինը իր ամբողջ շտաբով ինչպէս դէմքը պիտի ծռմռէր, եթէ նրան այդպիսի կամ դրա նման մի այլ բեֆերենդում առաջարկվէր, որովհետև գաւառներից առաջարկվեր, նրանք միանգամայն վստահ և հաւատացած են, որ այդպիսի հարցումների վերաբերեալ պատասխանների 95%-ը, եթէ ոչ աւելին, «այո» կը լինէր։

Կրկնում ենք, Գօրեմիկինը բոլորովին չը հասկացաւ, որ, մանաւոր, հենց իր ղ. Տրէպովի դրդմամբ, զանազան խուլիգաններից ու Անտոնների եպիսկոպոսի նման սինոդներից ստացված հեռագիրների վրա յենվելով, ինքը բեֆերենդումի սկզբունքն է պաշտպանում և մի շատ ազէտաբեր արշի ծառայութիւն է մատուցանում բիւրօկրատիային։

Մի ուրիշ հանգամանք ևս։ Եթէ մահվան պատիժը վերացնելու կամ պահելու համար բիւրօկրատիայի աչքում մի առանձին նշանակութիւն ունեն մանաւոր հեռագիրներն ու խնդրագրերը, ինչու ապա կառավարութիւնը բոլորովին անուշադիր թողեց այն բազմաթիւ ու տասնեակ հազարաւոր առարկութիւններ կրող հեռագիրները, որ Պետական Դումայի գումարվելուց առաջ, աւելի քան մի ամիս շարունակ, թափվում էին կառավարութեան գլխին և խնդրում, աղերսում էին կանգնեցնել մահվան պատիժ անուն կրող սպանութիւնները և սպանել Դումայի գումարվելուն։ Ի՞նչու այդ ժամանակ կառավարութիւնը խուլ մնաց, ինչու նա չը լսեց Ժողովրդի ձայնին, որը, դեռ ևս իր ներկայացուցիչների ժողովը չունենալով, տարված էր մանաւոր դիմումների ճանապարհը ընտրել։ Իսկ այժմ, երբ այդ ժողովը արդէն կայ, երբ ժողովրդի ներկայացուցիչները միաձայնութեամբ պահանջում են վերջ դնել այդ տոր սպանութիւններին, կառավարութիւնը ցինիկաբար յայտնում է, թէ՝ իմ խուլիգանները հակառակ են այդ բանին և ես նրանց կամքը աւելի բարձր եմ դասում ձերինից...

Ա.—Ազատ

ԶԱՆԳԻ ՀՐԱՒԷՐԸ

I

Արևը մարեց։ Սարի կատարից զօրանվեց զանգը։

Ծինգ-ծը՛նգ, ծինգ-ծ՛ընգ, ծինգ-ծը՛նգ... Հանդերում դադարեց գեղջուկի աշխատանքը։ Հօտաղը արձակեց իր գութանները, բեռցած եզները արօտը քշեց, իսկ ինքը մեկնվեց կանանցների մէջ սաղեր համբերու։

Զանգ գեղջկուհին կապոցը ձեռքին, մանր աղջիկներ ուրախ երգերով տուն են շտապում։ Այդ երգերի մէջ հալալ վաստակ ու համուս են գովում և մարդու սէրը կարտով երգում։

Տանը բեռցած աշխատաորին հարսն է ողջունում հոգացողութեամբ։

Իսկ ծերուկ ափին ու պառաւ տատը ժամ են շտապում աղօթք անելու, Աստծուց խնդրելու, որ ամեն փորձանք, արիւն ու չարիք գիւղի վրայից միշտ հեռու լինի, որ սուրբ տաճարի զանգակատնից զօրանվէ զանգը մշանջենապէս և նրա զօրեղ հնչիւնների մէջ միշտ սէր, աշխատանք ու բարին հնչէ...

Եւ ապրում էին միշտ գոհ ու անդորր սարի կատարին, արծիւների պէս, զանգի հաւէրով՝ հանդերը գնում, տուն վերադառնում...

II

Տարիներ անցան... ապառաժների խրոխտ կատարից զօրեղ չէ հնչում զանգակի ձայնը։ հնութեան ժանգը մաշել է նրան ու խոպոտ ձայնը հանդերի միջում հալիս է լսվում...

Մեռել է կեանքը, սառել ժպիտը ու լռել երգը գեղջուկի համար։ Ծանր հոգսերով մըռայլված է նա, սարի փեշերից էլ ցած չէ իջնում, հանդը անմշակ, խոր ժանգոտած, գութանը թոզած, միշտ գիրքը մտած իր սուր աչքերը ձորին է յառել։ Նամուսի համար նա ուխտ է արել, հարամիների մուտքն է հսկում և ժանգոտ հրացանը չլռտ ձեռքերում ընդգրկել սեղմում։

Լուռ է ամեն տեղ։ Սարի փեշերումն երբեմն միայն պաշտպան տղերքն են սուլում կամացուկ, սուլոց ստանում, որ գիրքում զգաստ հակում են նրանք։

Մի ուրիշ տեղում մէկը շշուկով անցեալն է քրքրում։ հայի չար բաղդը, արիւնտ ներկան մեր տխաստութեան, կարճամտութեան, մեր անմտութեան արդիւնք համարում։

— Ո՞վ է այդ մեղաւոր։ Ո՞վ է ուրանում այդ արատները, որ մեզ ծուատում, որ մեզ պառակտում, տկար է դարձնում վտանգի առաջ։

Այս վուշ աշխարհքում էլ օրէնք չը կայ, արդարան չը կայ։ թոյլը ուժեղի կամքին է թողնված։ Մի՞թէ չէք տեսնում։ Մեր գլխի ճարը մենք պէտք է տեսնենք, մեր յոյսը մեզ տեղ մեր գնենք, միշտ էլ կը փրկվենք։ Ասաց ու յանկարծ լռեց...

Սարի փեշերից խիճեր են թափվում, քարեր գլորվում... Որսորդը գիրքից իր սուր աչքերով այծեամ է տեսնում..., ծանր մխ քաշում, որ որսը ապտ անցնում է մօտից ու պրծնում ձեռքից։

Ի՞նչու է փախչում, ով է հալածում... Զորակի միջում, սարի տորոտում ամբոխ է եռում։ Արիւնածարաւ մարդ-որբենն է թալանի յոյսով գեպի վեր շարժվում...

Եւ արդէն մօտ է շարանի ծայրը առաջին գիրքին, երբ համարքը ուժգին որոտաց, սարեր ու ձորեր արձագանք տուին այդ սըխալ խաղին... Գմբէթի ծայրից զանգակը հնչից սրտաշարժ ձայնով ու գիւթեց գեղջուկին։ Նա ուշքի եկաւ... Գիւղը խանչվեց, լեռան գագաթը գիրքերը վազեց... Հարամին փախաւ, գիւղը փրկված է... Տաճարի զանգը նորից է հնչում ուժգին ու զուարթ։ Նա հրաւիրում և սիրտ է տալիս, կոչնակի նման մեզ համախմբում։

Լ. Դանիէլեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 22-ին

Անցեալ ամսին մի գիշեր յանկարծ լսվում է, որ քաղաքիցս անհետացել է գանձակեցի Սմբատ Սիմէօնեանը իր բազմանդամ ընտանիքով։

Նա վարում էր տեղիս «Надежда» ընկերակցութեան պաշտօնը։

Շաբաթներով նա զբաղված է եղել իր չար մտադրութիւնները իրագործելով, նա իր փեսայի մօտ գրաւ է դրել 11 հազարանոց սեփական տունը, ծախել է իր մի քանի հատ ապրանքակիր սայլերը, տան կահկարասիքը, առել է արտասահմանեան անցագիր, իրացրել է վերադիր վճարներով ստացված—քաղաքացիներին պատկանող գումարները, ոչնչացնելով բոլոր վաստակագրերը և, եթէ հաւատանք չաբ լեզուներին, ծախել է բաւականին մանուֆակտուրային ապրանքներ թէ տեղացիների վրա և թէ ուղարկել է Թիֆլիս...

Նոյ իր հետ վերցրել է մի խոշոր գումար, ըստ ոմանց 80 հազար, ոմանց 50 հազար, բայց ոչքան մենք սեղմ աղբիւրից իմացանք, տարել է մօտ 30—35 հազար, թէև սա էլ մենք ստոյգ համարել չենք կարող, քանի որ պակասում են շատ փաստաթղթեր ընկերութեան գրասենեակից։

Շատերը նրա այդ քայլն արդարացնում են նրանով, որ իբր թէ նա ընկերութեան հարիւր հազարներ արժեցող ապրանքները կոտրածը սկսելուց առաջ փոխադրել է հայց մասը, հետևաբար փրկել է նրանց կորստից, թոյլ չը տալով որ «Բօսիյկի» ընկերութեան պահեստում գտնվող ապրանքների նման զոհ դառնան թուրքական թալանին...

Բացի ընկերութիւնից, նրա փախուստով բաւականաչափ վնասվում են նաև մանաւոր մարդիկ, որոնց հետ նա յարաբերութիւն է ունեցել, և նա այդպիսիների թւում չէ խնայել նոյն իսկ մի արկածեալ բաղեցու 53 ռ. ամանաթ փողը։

Այդ կեղտոտ գործը քննելու համար տեղս է եկել ընկերութեան վերաքննիչ պ. Ուլման, և Պետերբուրգից դիրեկտօրներից մէկը։

Եթէ հաւատանք տարածված լուրերին «Надежда» ընկերութիւնը մտադիր է կատարել թուրքերի խնդիրքը—պահեստը հայոց թաղից փոխադրելու թուրքական մասը, ուր և գտնվում է «Բօսիյկի» կոմիսիօներական գրասենեակը։

Տարօրինակ լօգիկա։

Եւ իրաւ, հօ չէ կարելի մի մանաւոր մարդու յանցանքի համար պատժել մի ամբողջ ժողովուրդ, որի խորթ անդամն է եղել սմն Սիմէօնեան. ոչ ապաքէն ամեն ազգում պակաս չեն աւազակներ։

Աւ. Սահակեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մայիսի 22-ին

Խաւար մթնոլորտի և արիւնոտ օրերում անտանելի է գաւառական թղթակցի դրութիւնը։ պէտք է գրել, բայց ինչ գրել—միշտ սուգ, արտասուք, տանջանք, աքսոր, տուգանք, սով, ճնշում, անպատկառ ամենաթանկ բռնութիւններ... Կարելի՞ է միթէ տարներ շարունակ զբաղվել այդպիսի ինքվիզիցիական շարադրութիւններով։

Մի կողմ թողած քաղաքում տիրող նիւթական սաստիկ կրիզիսը, տեղի ունեցող մանաւոր դժբաղդ դէպքերը և մանաւանդ բանաւոր դասակարգի անելանելի դրութիւնը ոչ մի գործ չը լինելու պատճառով, որոնց մասին կը գրեմ մի այլ անգամ։ Այս անգամ աւելորդ չեմ համարում հաղորդել «Մշակ»-ի ընթերցողներին երկ, քաղաքից ոչ հեռու, Սատեփանօվկա արքաղ գիւղացիների հետ տեղի ունեցած մի դժբախտ դէպքի մասին, որը թէև իր տեսակի մէջ մի առանձին նորութիւն չէ պարունակում—բայց և այնպէս բաւական ազմուկ և վրդովմունք առաջացրեց ժողովրդի մէջ։

Ինչպէս ասացի, երէկ, ամսս 21-ին, վերոյիշեալ Ստեփանօվկա գիւղի բնակիչները (աբխազներ) մի հնչեցեալ ունենալով, ժողովրդի մեծ մասը գնում է նրա հետից և սեռերում մնում են միայն մի քանի կանայք և երեխաներ։ Այդ մինչցին մօտակայ բատարէաների (ամրութիւններ) զինուորներից չորս հարեան զինուոր գարմօն ածելով մանում են յիշեալ գիւղը և սկսում կանանց հետ անվայել ձևեր գործածել (թէև տարածված ձայները աւելին են պնդում)։ Կանայք երեխաների միջոցով լուր են տալիս ննջեցեալի հետից գնացած իրանց ամուսիններին զինուորների լպիրշ վարմունքի մասին։ Տղամարդիկ վրա հասնելուն պէս չորս զինուորի և գիւղացիների միջև տեղի է ունենում ընդհարում, որ և բնականաբար գիւղացիները յաղթելով, դուրս են վռնդում գիւղից զինուորներին։ «Կանֆուզիա» եղած զինուորները բատարէաներին մօտենալուն պէս սկսում են հաւարի կանչել իրանց ընկերներին, և, ինչպէս պատմում են, մօտ 12 հոգի հրացանները ձեռքներին թափվում են գիւղը։ Սկսվում է տրաքոցը։ Այդ բոլորից յետոյ թէ ինչ ձևով է ընթանում շարունակութիւնը—յայտնի չէ առ այժմ, միայն այսքանը պարզ է մօտաւորապէս, որ սպանված են երկու զինուոր և երկու կին արիւններից։ կան վիրաւորվածներ նաև երկու կողմից ևս։ Յիշեալ զինուորները և թէ քաղաքից Հօգնութեան հասած պլատունները՝ կօզակները հրդեհել են յիշեալ գիւղում 20—24 տներ ու ոչնչութեան են մատնել խեղճ բնակիչների ամեն ինչը...

Անհ ձեզ, ընթերցող, հպարտաւոր փաստերից կրկին մէկը, որ մարդիկ առանց որևէ յանցանք գործելու, առանց քննութեան առնվելու, կարող են մի քանի րօպէում գնդակահարվել, ոչնչութեան մատնվել թէ իրանք և թէ տասնեակ տարիների իրանց քրտինքի արդիւնքն էլ իրանց հետ միասին։ Երեկվայ շէն գիւղը այսօր չը կայ, հարիւրաւոր մարդկանց տասնեակ տարիների աշխատանքի վաստակը, թափած արիւն քրտինքի արդիւնքը մի քանի րօպէում կրակի ու ոչնչութեան է մատնված, առանց այն էլ ինչպէս ասում են շան չարչարանքով իրանց գոյութիւնը պահպանող ու շարունակ կեղեքվող գիւղացիների պատիւն ու ամենանուրը զգացմունքները այսօր փղոց են նետված ու ոտքի տակ տրված առանց որևէ յանցանքի, առանց որևէ չար դիտաւորութեան... Ու այդ բոլորը պէտք է անհետանայ, մոռացութեան տրվի, ոդի մէջ մի շշուկ միայն հնչեցնելով—ձանձրալի «Լինչ»-ն...

Կիրակի օր, ամսս 21-ին, տեղիս հայոց եկեղեցում պատարագիչ Մելեանց քահանան մի երկար քարոզ խօսեց ամսս 10-ին Վեհապատ Հայրապետի կողմից հրատարակած կօնդակի առիթով, որից յետոյ տեղի ունեցաւ նաև մաղթանք։ Պատարագին ներկայ էր նաև Գր. եպ. Գառնակերեանը, որը, ինչպէս լսեցինք, այսուհետև ուղևորվելու է Երուսաղէմ։ Կօնդակի ընթերցումը տեղի չունեցաւ, որովհետև էջմիածնից ստացվեց միայն պատարագը վերջանալուց յետոյ։ Ինչպէս լսեցինք, կօնդակի պատճէնները թերթերում բաժանելու համար վաղուց արդէն էջմիածնից ուղարկված է եղել Թիֆլիսի կօնսիստօրիային, որը յայտնի չէ թէ ինչու մինչև այժմ դեռ չէ բաժանել շատ տեղերում, ինչպէս չէր ուզարկել նաև Բաթում։

Այսօր քաղաքիս չորրորդ մասում տարածնակի հարուածով ծանր կերպով վիրաւորեցին մի երկաթուղու մեքենավարի. չարագործը իսկոյն անյայտացաւ։ Ինչպէս պատմում են պատմաւոր մանաւոր վրէժխնդրութիւնն է եղել։

Այս բոպէիս լուր տարածվեց, որ տեղիս Թերսօնեան գնդի երիտասարդ օֆիցէրներից մէկը ինքնասպանութիւն է գործել։ պատճառը առայժմ յայտնի չէ։

Գ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

Մայիսի 17-ին

Կիրակի, ամսս 14-ին, պատարագից յետոյ Ասխաբադի Տիական ուսումնարանի բակում կարդացվեց անցեալ ուսումնական տարվայ համառօտ հաշիւը և բացատրվեց թէ ինչպէս և ինչ միջոցներով է ուսումնարանը պահպանել իր գոյութիւնը։ Զը նայած որ տարվայ սկզբին որոշված էր, որ ուսումնարանի գոյութիւնը պահպանելու համար ոչ թէ աշակերտներից ստանալ ուսման վարձ, այլ ամբողջ հասարակութիւնը պիտի հոգայ բայց և այնպէս մինչև օրս մի կօպէկ փող չէ ժողովվել։ ուսումնարանի բոլոր ծախքերը, ուսուցիչների ռոճիկները տրվել են եկեղեցու միջոցներից։

Կանգ առնել մանրամասնութեան վրա թէ ինչպէս է ընթացել դասաւանութիւնը, թէ ուսուցիչների առանձնայատկութիւնները, նը-կարագրել հոգաբարձութիւնը—չարժէ, որովհետև արդէն ուշ է և անցածն անցել է, և բացի դրանից անցեալ տարի այնքան մեծ հոգսերով էինք զբաղված, որ ուսումնարանը կամ որևէ հասարակական հիմնարկութիւն մեր աչքին չէին երևում, այլ բաւականացան ժամանակաւոր ընտրել մի երեք մարդ ուսումնարանը կառավարելու համար և ձեռքի տակ ունեցած մարդկանց յանձնել «մանկավարժութիւնը»։

Այս, անցածն անցել է, միայն հասարակութեան ուշադրութիւն ենք հրաւիրում ապագայ սերունդի կրթութեան և զարգացման վրա։

Անցաւ այն ժամանակը, երբ հայերը գոհ էին, որ թոյլ են տալիս իրանց խօսելու մայրենի լեզուով, անցաւ, երբ առանց քննելու, զննելու, միայն ուրախ էին, որ ուսումնարանում հնչվում են գոնէ հայոց լեզուն, հայերէն բառերը։ այդ արգելքների, ճնշումների ժամանակն անցաւ։ Եկել է նոր շրջան, նոր ժամանակ, որ մարդիկ պէտք է կրթվեն մայրենի լեզուով, սովորեն, մտածեն մայրենի լեզուով։ Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ ներեխան ժամանակի համաձայն առաջ ընթանայ, նրանից պատրաստվի արժանաւոր ազգի անդամ։ Տեսնում ենք, թէ ինչպէս ներկայ աւերածուի հոսանքի մէջ մարդիկ տակն ու վրա են լինում, ինչպէս հեղեղի մէջ չոր տերևները, կամ անհետանում են պղտոր ջրի խորքերում, կամ երես անում ու կամաց-կամաց հոսանքի հետ լողում։

Մատաղ սերունդի համար ոչ միայն նրանց ծնողները պիտի մտածեն, այլ և ամբողջ հասարակութիւնը, նրա գիտակից անդամները։ Թող մոռանան իրանց նը, խնամիական կապերը, նուիրվեն ընդհանուրի շահին, անաչառ և արդարութեամբ վերաբերվեն ամեն մի ազգային գործի, ամեն մի կենդանացուցիչ գործ!։

Այս ութ ամսվայ ընթացքում մեր հասարակութիւնը շատ անտարբեր է վերաբերվել դէպի ուսումնարանը, նոյն իսկ չեն գտնվել գոնէ անհատներ, որոնք հետաքրքրվէին իմանալու թէ ինչ է կատարվում ուսումնարանի ներսը, միայն բաւականացել են, որ ուսումնարանը գոյ է և մի քանի երեխաներ յաճախում են։

Ուսումնարանը իր բարձրութեան վրա կանգնած կը լինի այն ժամանակ, երբ մանկավարժները և հոգաբարձութիւնը գիտակից մարդիկ կը լինեն, երբ նրանք արժանի կը լինեն իրանց կոչման։ Եթէ մենք առաջարկենք, որ ուսումնարանի գործը ևս անցնել հիմնասարդութեան ձեռքը, դրանով անպատված կը լինենք մեր տաղանդին-խազէիններին, (որովհետև փող հարկաւոր եղած ժամանակ նրանք շատ են տալիս), կամ հենց բոլորը նրանք են տալիս), այլ կառավարկենք ընտրել ձեռնհաս և փոքր ի շատէ տեղեակ այն բանից, որի համար ընտրվում է նա։

Հարկաւոր է հիմիկվանից մտածել եկող տարվայ համար, որ անցեալ տարվայ նման ուսումնարանը խախտում հիմքերի վրա չը դրեն։ Մեր ուսումնարանը գուրկ է ամենահրաժեշտ պիտոյքներից և ունի շատ պակասութիւններ, հարկաւոր է լրացնել։ գործելու ասպարէզը շատ լայն է և իրաւունքները անսահման, միայն անվեհեր և անաչառ գործիչներ են հարկաւոր։

—

Եկեղեցու քակից խուռն բազմութիւնը դիմեց դէպի մանկական պարտէզը։ Այնտեղ հանգէս էր։ Աշակերտները երգեցին մի քանի ազգային երգեր և արտասանեցին ոտանաւորներ հայերէն և ռուսերէն։ Շատ լաւ ապատրաստութիւն թողին հանդիսականների վրա դեռ չը բացված, մանուկ լեզուի թոթովանքները, մանաւանդ մատաղ աշակերտութեան վրա, որոնք իրանց փոքրիկ ընկերներին վարձատրում էին բուռն ծափահարութեամբ։ Հանդէսի վերջը ընկեր. վարչութ. նախագահ տիկ. Մամիկոնեան կարդաց տարվայ հաշիւը, փոխվող և մեծացող աշակերտների թիւը և բացատրեց պարտէզի նշանակութիւնը ու տուած օգուտները. վերջը յարգելի տիկինը մարտի հրաւէր կարդաց այն մարդկանց դէմ, որոնք յանդգնում են տիկնոջ ասածները քննադատել «նրա հետից խօսել» և այլն։ Սակայն տիկնոջ ասածների համաձայն ոչ ոք իրաւունք չունի «ազգային գործիչի մը» վրա խօսելու, ինչ որ նա անելու, ասելու լինի, պէտք է հասարակութիւնը նոյնութեամբ ընդունէ և արիութեամբ կատարէ...

Տ. Մէլիք-Յուսէֆեանց

ԹԱՒՐԻԶԻ «ՀԱՅԿԱԶԵԱՆ-ԹՄԱՐԵԱՆ» ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

—

Այժմ, երբ մեր դպրոցական ծրագիրների վերաքննութեան խնդիրը դրված է հրապարակի վրա, երբ սպասվում է էջմիածնում ընդհանուր ժողով դպրոցական կեանքի մի քանի կարևոր հարցերին լուծումն տալու համար, կարծում ենք, պատեհ է ծանօթացնել հայ հասարակութիւնը Թաւրիզի դպրոցական հաստատութիւններից մէկի հետ, որ իր տեսակի մէջ միակն է թէ ամբողջ Պարսկաստանում և թէ նոյն իսկ Կովկասում։

Մեր խօսքը Թաւրիզի «Հայկազեան-Թմարեան» դպրոցի մասին է։

Թաւրիզի հայ ազգաբնակութիւնը, որ հաշուում է, մօտաւորապէս, ութ հարիւր տուն, ունի երկու դպրոցական հաստատութիւն՝ «Արմենան ս. Անանեան» քաղաքի Դաշ կոչված թաղում և «Հայկազեան-Թմարեան» Լիլաւա թաղում։ «Արմենան ս. Անանեան» դպրոցը էլէ դար է, ինչ գոյութիւն ունի, իսկ «Հայկազեան-Թմարեան» դպրոցը համեմատաբար նոր է հիմնված։ Երկար տարիներ վերջին դպրոցը երկդասարանեան էր և հազիւ տարրական կրթութիւն միայն կարողանում էր մատակարարել իր սաներին։ Սակայն վերջին վեց տարին շնորհիւ հոգաբարձութեան և մանաւանդ նախկին տեսուչ պ. Տ. Ռաշմաճեանի և ուսուցչական խմբի անձնուէր ջանքերին դպրոցը հետզհետէ բարձրացաւ, ունեցաւ դասարանների թիւը և եղաւ մի տարի, երբ դպրոցն ունեցաւ վեցերորդ դասարան՝ իր ծրագրով յար և հաւասար կովկասեան հայկական միջնակարգ դպրոցներին, սակայն նրանցից աւելի գերազանց։ Դպրոցը տուեց այդ տարի իր առաջին շրջանաւարտները, թւով 11, որոնք գրեթէ առանց բացառութեան, նուիրել են իրանց ուսուցչական գործունէութիւնն Ատրպատականի խուլ գաւառներում, որտեղ հմուտ և բարեխիղճ ուսուցիչների այնքան մեծ կարիք է զգացվում։

Դժբախտաբար, երկար չը տևեց դպրոցի ծաղկեալ վիճակը. կրքերը յուզվեցան այս սրբազան հաստատութեան շուրջը և այն զոհ գնաց կուսակցական տխուր շահատակութիւններին և այնպիսի ժամանակ, երբ շնորհիւ անդուլ ճիգերի և մեծ զոհաբերութիւնների, դպրոցը աջողված էր դնել զարգացման հաստատուն ճանապարհի վրա։ Մի տարվայ փակումից յետոյ թէև վերաբացվեց դպրոցը, սակայն ոչ նախկին դասընթացով, դպրոցն այժմ ունէր միայն երեք պատրաստական և չորս հիմնական դասարան։ Հոգաբարձութիւնը բաց է արել այս տարի հինգերորդ դասարան և մտադիր է բանալ առաջիկայ տարին վեցերորդ դասարան։

Սակայն հօ ինձ առաջադրած նպատակին հասած չէի համարի, եթէ բաւականացի լոկ պատերի այսպիսի յիշատակութեամբ և այդ չէ, որ ինձ ստիպել է գրիչ վերցնել։ Դպրոցի ներքին կեանքը, դպրոցական ծրագրի էութիւնը—ահա այս է հետաքրքրական և այդ մասին է, որ ես նպատակ ունեմ գաւառական կարմել տալ Կովկասի հայութեան։

Նախ և առաջ պէտք է նկատեմ, որ ուսուցումը դպրոցի մէջ առաջ է տարվում առարկայական մէթոդով, ամեն ինչ աշակերտներին տրվում է կօնկրէտ, թանձրացեալ օրինակներով, որչափ այդ թոյլատրում են շրջապատող հանգամանքները։ Ուսուցչական խումբը կազմում է զբօսանքներ դէպի քաղաքի շրջակայքը, որտեղ աշակերտները և աշակերտուհիք ծանօթութիւն են կազմում լեռան, բլրի, դաշտի, հովտի, ձորի և այլն մասին։ խաղում մաքուր օդի մէջ և կազդուրում իրանց ոյժերը։ Այդ զբօսանքները առաւել կրթիչ և օգտաւէտ են մանաւանդ աշակերտուհիների համար, որոնք հնարիւ տեղական պայմաններին, ստիպված են օրվայ մեծ մասը տանը անցնել։

Դպրոցի ծրագիրը*) թէև կազմված է հնարաւորութեամբ կովկասեան հայկական միջնակարգ դպրոցներին, սակայն գերազանցում է նրանց ամեն տեսակէտից. դպրոցի ծրագիրը աւելի համապատասխանում է կեանքի պահանջներին և կիսատեան տուած վերջին արդիւնքներին։ Նախ՝ ծրագրից դուրս են վարվում բոլոր կրօնական առարկաները, որպիսիք են՝ քրիստոնէական վարդապետութիւն, Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու պատմութիւն, ներածութիւն ս. գրքի, դասանդանութիւն և այլ այս կարգի անմտութիւններ, որոնք ծառայում են միայն խճողելու աշակերտների միտքը։ Կրօնական առարկաներից պահանջված է միայն սրբազան պատմութիւնը, որը ծանոթում կայ վերածելու պարզ հրէից պատմութեան, իսկ Յիսուսի վարդապետութիւնը և քարոզութիւնները անցնում են, իբրև բարոյական պատմութիւններ։ Երկրորդ՝ ծրագրի մէջ մեծ տեղ է տրված բընական գիտութիւններին և հումանիտար առարկաներին։ այսպէս աշակերտները անցնում են յաջորդաբար կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, մարդակազմութիւն, ֆիզիկա, ատոմաբաշխութիւն, տարրական քիմիա, երկրաբանութիւն և զարգացման թէօրիա—վերջին առարկան բնական գիտութիւնների փիլիսոփայութիւնն է՝ զարվինիզմը իր յետագայ լրացումներով։ Հումանիտար առարկաներից առանձնապէս մեծ տեղ է դրված ընդհանուր և հայկական նորագոյն գրականութեան և ընդհանուր պատմութեան։ Զորրորդ դասարանից սկսած դասարանական ընթերցանութեան միջոցով աշակերտները ծանօթանում են եւրոպական և հայկական գրականութեան նշանաւոր արդիւնքներին, ստանում են նախնական տեղեկութիւններ գրականութեան տեսութեան մասին և այս բոլորը լրանում և ամփոփվում է վեցերորդ դասարանում։ Վեցերորդ դասարանին են վերապահված հոգեբանութիւնը, տրամաբանութիւնը և մանկավարժութիւնը. աշակերտները մանկավարժութեան տեսական մասը իրացնելուց յետոյ երկրորդ կիսամեակից արդէն պէտք է յաճախեն ուսուցիչների դասերը, ներկայ լինեն փորձնական դասերին, որ իրաքանչիւր երկու շաբաթը մի անգամ տեղի են ունենում դպրոցում, այդ դասերի քննադատութեան և ապա իրանք ևս տան փորձնական դասեր ուսուցիչների և ընկերների ներկայութեամբ։ Վեցերորդ դասարանում աւանդվելիք առարկաների մէջ ծրագրված է մացնել նաև կրօնների համեմատական պատմութիւն և քաղաքական տնտեսութեան հիմունքները։

Ուսուցման սիստեմը միասին է. այսինքն տղայ և աղջիկ միասին են սովորում մինոյն դասարանում։ Այդ այն առաւելութիւնն ունի, որ երկու սեռի յամախակի շփումը, այն էլ դպրոցական մաքուր հասակում, ստեղծում է պարզ և բնական յարաբերութիւններ նրանց մէջ և բարերար կերպով է ազդում թէ տղաների և թէ աղջիկների բնաւորութեան վրա։ Աղջիկները և աշակերտուհիք, որոնց յարաբերութիւնները ուսուցիչների հետ միանգամայն մտերմական է, տալիս են ուսուցիչների դեկավարութեամբ դասախօսութիւններ, որտեղ երբեմն ներկայ են լինում նաև դրսից կողմնակի անձինք։ Բաքանչիւր նիւթ դասախօսելուց յետոյ զրվում է վիճաբանութեան, որին մասնակցում են աշակերտներն ու աշակերտուհիք միայն։ Այդպիսի կրթութեան հետևանքն է աշակերտների և աշակերտուհիների մէջ առաջին իսկ հայեացքից աչքի զարնող վստահութիւնը, համաձայնութիւնը, որ Թաւրիզի կեանքի պայմանների մէջ, որտեղ նահապետական հասկացողութիւնները դեռ պահպանել են իրանց ոյժը, որտեղ լութիւնը առաքինութիւն է համարվում մատաղ սերնդի համար, մինթարական մի երևոյթ է։ Պէտք է միայն տեսնել, թէ ինչպէս դպրոցի աշակերտները հրապարակական դասախօսութիւններին համարձակօրէն վիճում են դասախօսների հետ՝ հարիւրաւոր ունկընդիրների ներկայութեամբ և համարձակ շե

էր և երթևեկութիւնը ընդհատված, գեներալ Լեվիցկու գալուց ի վեր բացված է և երթևեկութիւնը այդ ճանապարհով անարգել շարունակվում է։

Դիլիջանը իր բնական զարդարանքներով պճնված՝ սպասում է նրանց, որոնք գիտեն դնահատել և օգտվել այդ բնական բարիքներից։

Խնդրում եմ հայ և օտար լրագրներին արտատպել իմ այս նամակը։

Տնտուսէր Դիլիջանի գիւղական հասարակութեան՝ Ս. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բագուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կողմից Փոխարքային ներկայացրած «Բագուի հայոց կուլտուրական դաշնակցութեան» կանոնադրութեան նախագիծը, համաձայն սոյն տարվայ մարտի 4-ի ժամանակաւոր կանոնների, ուղարկված է Բագուի նահանգապետի իշխանութեան։

—

«Наша Мысль» լրագիրը ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրված է, մինչև զինուորական դրութեան վերացումը, իսկ խմբագիր Լ. Ֆ. Տիգրանեանցը բանտարկված է գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորելու համար։

—

Զորեքշաբթի, մայիսի 24-ին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը, ուսպարապետ անդամները, վաճառականական ընկերութեան անդամները ներկայացան ժամանակաւոր գեներալ-նահանգապետին և յայտնեցին, որ վաճառականները համաձայն են իրանց խանութները փակել երեկոյեան ժամը 6-ին։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը նրանց պատասխանեց, որ այդ դրութիւնը ճնշում է ազգաբնակութեան, ուստի նա չէ կարող համաձայնվել նրան։ Այն ժամանակ քաղաքի ներկայացուցիչները և վաճառականութիւնը միջնորդեցին թոյլատրել, որ գալանտէրէյնի և մանուֆակտուրի խանութներում առևտուրը կատարվի մինչև երեկոյեան ժամը 7-ը, իսկ ուտելեղէնների խանութներում մինչև երեկոյեան ժամը 8-ը։ Առայժմ հարցը մնացել է առկախ։

—

Ստացանք Մարգարի «Հոգեվարքի Մի ծաղը», պատմուածք Բագուի սարափներից, հրատարակութիւն Յ. Տէր-Դաւթեանի, գինն է 10 կոպէկ։

—

Մոսկվայի շրջանի երկաթուղու վրա մայիսի 18-ից գործադուլ է սկսվել։ Բանուորները առ այժմ տնտեսական պահանջներ են միայն յայտնում։

—

«Русскія Вѣд.» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Մայիսի 19-ին, առաւօտեան ժամը 9-ին Սարատովից Մոսկվա բերին 60 հոգի քաղաքական յանցաւորներ հիւսիսային նահանգներն ուղարկելու համար։ Ի նկատի ունենալով, որ յանցաւորների թւում կար նաև Մ. Ա. Սպիրիդոնովան, որը գալիս էր Տամբովից, վօկզալ էին ուղարկված ահագին քանակութեամբ հրացաններով զինված գօրավօխներ և հեծեալ ժանդարմների էսկադրոն։ Մ. Ա. Սպիրիդոնովան վագոնից ժանդարմների հսկողութեամբ տարվեց ոստիկանութիւնից ուղարկված բանտարկեալների կառքը և կրկին հեծեալ ժանդարմների հսկողութեամբ տարվեց Բուտիրսկի ժամանակաւոր բանտը։ Կերպարանքին նայած, նա ըստ երևոյթին առողջ էր երևում և նայում էր բաւական ուրախ և հպարտ։ Նա հագած ունէր սև զգեստ և սպիտակ գլխարկ։ Այդ խմբակի հետ միասին բերված են Վլադիմիրսկոյից և 15 նաւաստիներ։

—

«Телефонъ» լրագրի նախկին խմբագիր Ն. Ե. Զեդլիանովը դիմել է Թիֆլիսի նահանգապետին խնդրելով թոյլ տալ իրան Թիֆլիսում հրատարակել ռուսերէն լեզուով ամենօրեայ լրագիր «Народъ» անունով. իշխան Լօլուան թոյլատրութիւն խնդրից նահանգապետից հրատարակելու Թիֆլիսում ռուսերէն լեզուով մի օրաթերթ «Разсвѣтъ» անունով։

—

«Современникъ»-ը հաղորդում է, որ ադմիրալ Դուբասովի կենաքի դէմ մահափորձ անողի անձնաւորութիւնը, որը զոհ է եղել ռումբի պայթումին, վերջնականապէս պարզվել է։ Նա Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող Վնօրօվսկի-Մլշէնսկոն է։ 1902 թ-ին, մինչև ուսանողական անկարգութիւնների մասնակցելը, նա արտաքսվել էր Մոսկվայից և գտնվում էր շարունակ աքսորում։

—

Մայիսի 18-ին Մոսկվայի գեներալ-նահանգապետ ադմիրալ Դուբասովի տան մօտ խմբվել էին անգործների ներկայացուցիչները և թոյլութիւն էին խնդրում սնամբը բացատրելու գեներալի հետ անգործների ներկայ անտանելի վիճակի մասին։ Ադմիրալ Դուբասովի կողմից կարգան մերժումն ստացվեց ընդունելու պատգամաւորներին և, անմիջապէս կալանաւորից նրանց ոստիկանութիւնը և ուղարկեց ոստիկանատուն։

—

Սև հարիւրակի զոհ դարձած Բաումանի յայտնի գործը, որ տեղի ունեցաւ ազատութիւնների յայտարարութեան առաջին օրը, թափօրների ժամանակ, վերջնականապէս քննվելու է Մոսկվայի նահանգական դատարանում մայիսի 31-ին, երդուեալների մասնակցութեամբ։

—

Պօլտավայից հաղորդում են «Рус. Сл.»-ին, որ զէմկի կառավարիչները խիստ ադատացիա են սկսել գիւղացիների մէջ՝ համոզելու նրանց գաղթել Տուրգայսկի շրջանը։ Այնուամենայնիւ ոչ մի աջողութիւն չէ ունենում. գիւղացիները վճռել են սպասել, մինչև տեսնեն թէ ինչ կանէ Պետական Դուման։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ Նիստը բացվում է ժամը 12-ին։ Նախագահում է Մուրոմցեվը։ Զեկուցվում է Դումային ուղարկված մի շարք շնորհաւորական հեռագրերների մասին, որոնց թւում և սալօնական դաշնակցութեան, Լվովի ժողովրդական կուսակցութեան ռուս մարդկանց ժողովի, Արգենտինայի ռուս քաղաքացիների և Երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան ուղարկած հեռագիրները։ Զեկուցվում է այն 5 առաջարկութիւնները, որոնցով առաջարկութեան հեղինակները խնդրում են հարցապնդում անել մինիստրներին։ Այդ առաջարկութիւններից 4-ը յետաձգվում է մինչև առաջարկութիւնների տպագրվելը և անդամներին բաժանվելը. իսկ որոշվում է քննել 5-րդ առաջարկութիւնը որ վերաբերում է պատգամաւոր Օրնինսկու տուացած հեռագրին, որ յայտնում է թէ բժիշկ Տրունովը աքսորվել է Տուրուխանսկի նահանգը։ Որոշվում է յանձնել մի մասնաժողովի, որ նա իր կողմից հարցապնդէ ներքին գործերի մինիստրին։ Կարդացվում է այն առաջարկը, որ արված էր անցեալ անգամ ազրարային հարցի վիճաբանութիւնը դադարեցնելու առիթով, և խնդրում է ընտրել 33 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ մշակէ մի նախագիծ—տեղական ազրարային կոմիտէներ կազմելու համար—ուղղակի, հաւասար, ընդհանուր և գաղտնի ձայնաւորութեամբ։ Որոշվում է այդ առաջարկութիւնը տալ և բաժանել անդամներին։ Դուման անցնում է բաժինների զեկուցագրերի քննութեան։ Զեկուցվում և հաստատվում է Պոզօրեան նահանգի պատգամաւոր Զաբալօնու ընտրութիւնը։ Առաջարկված առաջարկութիւնը՝ ընտրել մի մասնաժողով հոկտ. 17-ից յետոյ կառավարչական անձերի և հաստատութիւնների ապօրէն գործողութիւնները քննելու համար—Վիճակների առաջարկութեամբ յետաձգվում է ուրբաթվան։ Նոյն օրը քննելու է և նակազի նախագիծը։

Դուման անցնում է քննելու Պետական Դումայի կանոնադրութեան 55, 56 և 57 յօդուածները վերացնելու հարցը։

Վիճակը առաջարկում է յանձնել հարցը մասնաժողովին։

Կօռսակովը առաջարկում է հէնց, նոյն մասնաժողովին յանձնել այդ 55, 56, 57 յօդուածները վերաքննելու գործը։

Նախագահը այդ առաջարկը ուշադրաւ է ընդունում և կողմակից է, որ այդ հարցը մշացվեն 30 անդամները օրէնսդրական կարգով։

Անիկինը անօգուտ է համարում զբաղվելը մանր և աննշան հարցերով այն ժամանակ, երբ հերթին դրված են աւելի լուրջ հարցեր, ևս առաւել, որ միևնոյն է, մինիստրութիւնը Դումայի օրէնսդիրներն ընթացք չի տայ։

Նովօսիլցեվը ընդդիմախօսում է, որ այդ հարցը աննշան հարց չէ։ Վիճակների առաջարկութեան առիթով ծագած վիճաբանութիւնները ձգձգվում են։ Խօսում են Անիկինը, Սերոլանօվը, Ալադինը, Բօդիչէվը, կոմս Հէյդէնը և Օստաֆիէվը։

Անիկինը յայտնում է, որ անպայման բոլոր օրինագծերը կը կորչեն, որովհետև սխալվում են նրանք, որոնք մտածում են թէ՝ որ մենք սահմանադրութիւն ունենք, չը պէտք է մանը մունը բաների հետից ընկնենք, անհրաժեշտ է տեղական կոմիտէներ ստեղծել, որոնք, յիրաւի, կարող են մեծ գործ կատարել։ իսկ այստեղ մենք ոչինչ չենք անի։ կը լսենք միայն մինիստրներին, որոնց հետ մի ընդհանուր բան չունենք մենք (բուռն ծափահարութիւններ)։

Ալադինը խօսում է աշխատաւոր խմբակի անունից և ասում է, որ Դումայի առաջարկած պահանջը, անմիջապէս հրաժարական տալ, մինիստրութիւնը հասկացել է այն մտքով, թէ Դուման ցանկութիւն է յայտնել ազրարային հարցի առիթով նրանից որևէ բացատրութիւն լսել։ Երկու մինիստրութիւններն էլ՝ մէկը լիազօրութիւններով, միւսը առանց այդ լիազօրութիւնների, խօսում են ինչպէս կամենում են։ Հարկաւոր չէ տարակուսվել, օրինագծերը ընդարձակելու մասին ոչինչ չի դուրս գալ, մինչև որ Դումայի և նրանից դուրս եղած յարաբերութիւնները յարաբերական չը լինեն։ Այժմ ոյժը, այսինք թնդանօթները, գնդակաֆիրները և զօրքը մինիստրների կողմն է, ահա թէ ինչու են, նրանք այստեղ գալիս, ուշադրութիւն չը դարձնելով իրանց անվստահութեան քուէին։

Մենք պէտք է սպասենք, որ ժողովուրդը ձեռք բերէ մի հզօր ու կարի ոյժ, որ ստիպէ մինիստրներին Դումայից իրանց փաստաթուղթը հաւաքել։

Նախագահը կանգնեցնում է հռետորին, յայտնելով, որ ամեն մի խօսք միտք թոյլատրելի է, բայց պէտք է այդօրինակ մտքերը կարդին և վայելուչ կերպով արտայայտել։

Ալաֆինը հեգնօրէն «փաստաթուղթ» խօսքը փոխարինում է «հեռանալ» խօսքով։ Վերջում հռետորը դիմում է մինիստրներին երեք հարցով. «զգացե՞լ է արդեօք, նրանց խիղճը, որ երկիրը փաստօրէն կորցրել է դէպի նրանց իր վստահութիւնը», ծանուցե՞լ են, արդեօք, նրանք բարձրագոյն իշխանութեան Դումայի այդպիսի վճռի մասին, և եթէ այո, բարձրագոյն իշխանութիւնը ինչ պատասխան է տուել նրանց։

Ցեռապայ հռետորները բացատրում են, որ Դուման կարող է առաջ գնալ միայն օրինագծերի ճանապարհով։

Բուէարկվում է 55, 56, 57, յօդուածների փոփոխման դրօնը մասնաժողովի յանձնելու հարցը։ Առաջարկութիւնն ընդունվում է։

Դրանից յետոյ յայտարարվում է 1 ժամով ընդմիջում։

Ագրարային հարցի վերաբերեալ ընդարձակ ճառեր են արտասանում լեհ պատգամաւորներ Եպսվեցկին և Ստեցկին, որոնք առաջարկում են ագրարային հարցի լուծման վճիռը յանձնել ծայրագաւառների ազգաբնակութեան։ Ստեցկին չէ հասկանում 42 անդամների գրութեան մի քանի յօդուածները, որոնք հրատարակում են համակայսերական պարտաւոր հիմնական որոշումներ։

Օտանկին (գիւղացի) յոյս է յայտնում, որ Դուման արդարօրէն կը վճռէ հողային բաշխման հարցը։

Զիժօվսկին մի երկար ճառով ցոյց է տալիս, որ անհրաժեշտ է ագրարային հարցի քննութիւնը յանձնել տեղերում, պնդում է, որ առնօգուտ, նոյն իսկ սակարկելի կը լինի որոշել աշխատանքի և պահանջվող մնչպսի նորմա, որ ընդհանուր լինի հանուր Ռուսաստանի համար. առաջարկում է այդ նորմաների որոշման և կարգադրման գործը, — ամեն մի տեղի համար առանձին, համաձայն տեղական պայմանների, յանձնել տեղական մասնաժողովներին։

Օճիպկօն անօգուտ է համարում ընդհմախօսել մինիստրներին, որոնց մնում է միայն մի բան, հրաժարական տալ, բայց իրան ուղարկած զիւղացիների կողմից պահանջ է յայտնում, որ «բոլոր հողը, բոլոր ազատութիւնը, բոլոր ժողովրդին» ասացվածքը իրականանայ։ «Ապա հռետորը յիշեցնում է Մոսկվայում կայացած գիւղացիութեան դաշնակցութեան հանգումարի պատմութիւնը,—այն ցնծն ու ջարդը,—որոնց ենթարկվեցին նրա անդամները։

Յորդորում է ընդունել աշխատաւոր խմբակի մացրած բարեփոխման նախագիծը։

Զիժէվսկուց յետոյ խօսում է Դրուցկի-Լիւբեցկի ազրարային հարցի մասին։

Ապա նախագահը կարդում է այն գրութիւնը, որ գրված էր էչերնիգովսկի երդուեալ հաւատարմատարի օգնական Գուլխանեանկուն Սիբիր աքսորելու, երկրաչափ Ֆօրմակովսկու և ուրիշ շատերի ապօրէն ձերբակալութեան և Վարշավայում անչափահաս Դոլինսկուն և Մալիարսկուն զինուորական դատարանին յանձնելու առիթով, և որի մէջ խնդրվում է այդ բոլորի մասին հարցապնդել ներքին գործերի մինիստրին։ Բոլոր հարցերն էլ որոշվում է յանձնել 19-րդ մասնաժողովին, միայն վերջինը ընդունվում է անկտուձգելի։

Ապա կարդացվում է այն բողոքագիրը, որ յայտնում է, թէ Սարատովում նախկին նահանգապետ Ստոլիպինը ապօրինի կերպով արգելել է փաստաբան Զուտայէվին մասնակցել Դումայի ընտրութիւններին։ Խնդրվում է հարցապնդել, որ Ստոլիպինը դատարանին յանձնվի։

Կոմս Հէյդենը առաջարկում է հարցապնդման աւելի լուրջ կերպարանք տալ։ Սարատովի նախկին նահանգապետ և ներքին գործերի մինիստր Ստոլիպինը մինոյն անձն է։ Որոշվում է այդ գործը յանձնել մասնաժողովին. որոշվում է նաև մասնաժողովին յանձնարարել, որ նա իր կողմից հարցապնդէ զինուորական մինիստրին խափանելու Սէվաստոպոլում Նէպլիւէվի գործի առիթով ձերբակալված անձանց մասվան պատիժները։

Կարդացվում է 15 անդամների առաջարկութիւնը—Դումայի նիստը շարունակել մինչև գիշերվայ ժամը 12-ը, երբ քննվի ագրարային հարցի հարցը։ Դրա դէմ խօսում է կոմս Հէյդէնը։

Նիստը փակվում է երեկոյեան ժամը 7-ին։ Միւս նիստը կը կայանայ ուրբաթ, առաւօտեան ժամը 11-ին։

Երեկոյեան նիստեր գումարելու համար արված առաջարկութիւնը մերժվում է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ Մայիսի 26-ին, ցերեկվայ ժամը 1-ին նշանակված է Պետական Խորհրդի նիստը՝ Խորհրդի ընտրեալ անդամների լիազօրութիւնը ստուգող մասնաժողովի զեկուցումը լսելու համար։—Աշխատաւորների խմբակը մայիսի 24-ին առաջարկելու է—դադարեցնել ազրարային հարցի վիճաբանութիւնները, մինչև որ անյապաղ տեղական հողային բարեկարգիչ մասնաժողովները կազմվեն։ Ժողովրդական ազատութեան դաշնակցութեան կենտրոնական կոմիտէին կից գտնվող բանուորական մասնաժողովը որոշել է առաջարկել Դումայի պարլամենտական ֆրակցիային, որ նա իր կողմից Դումային առաջարկէ պրոֆեսիոնալ դաշնակցութիւնների և գործադուլների ազատութեան մի նախագիծ։—Սենատը բացատրել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան, որ դաշնակցութիւնների օրինականացման գործը վարելու են ոչ թէ քաղաքապետները և նահանգապետները, այլ մայրաքաղաքների քաղաքային գործերի նահանգական բաժինները։

Կիէվ, 24 մայիսի։ Պոլիտեխնիկումի ինքնատուաւ խորհուրդը որոշեց այս տարի ընդունել աւարտման քննութեամբ նաև սեմինարիաներին և ուսուցչական ինստիտուտը աւարտածներին՝ կլասիքական և ռէալական գիմնազիաները և գպրոցները աւարտածների նման։

ԲԵՐԼԻՆ, 24 մայիսի։ Կայսրը երեկոյեան 4 ժ. 45 րոպէին մեկնեց Վիէննա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ Համառուսական ազնուականութեան լիազօրների համագումարը Կայսրին մի հեռագիր է ուղարկել, արտայայտելով իր ամենանպատակ ըզգացմունքները, և յայտնելով որ սրանից յետոյ էլ՝ ազնուականները հաւատարիմ և նուիրված կը մնան գահին և ռուս ժողովրդի ու մեծ, անբաժան Ռուսաստանի հիմնական սկզբունքների պատմական պատուէրներին և աւանդութիւններին։ Կայսրը հեռագրով բարեհաճել է պատասխանել. «Անկեղծ շնորհակալեմ միացեալ ազնուականութեան համագումարի լիազօրներին—իրանց արտայայտած զգացմունքների համար»։—Նահանգական դատարանը մօտիկ ապագայում պէտք է քննէ մի կարևոր գործ. մեղադրվում են 6 փաստաբաններ՝ Զարուդնին, Ելիսէվ և ուրիշները 282 յօդ. հիման վրա, որ հոկտ. 15-ին նրանք դատարանում պահանջ են յայտնել դադարեցնել պարապմունքները։ Գործը կը քննվի առանց երդուեալ ընթերակայների։

ՄԱԴՐԻԴ, 24 մայիսի։ Մադրիդի նահանգապետը համոզվել է, որ արքայական կեանքի դէմ մահափորձողը միայն Մօրանն է։ Ոստիկանութիւնը պարզել է, որ մի տարի առաջ Մօրանը մասնակցել է Սպանիայի Թագաւորի և նախագահ Լուբէի կեանքերի դէմ մահափորձութիւններին։ Վարցելօնում ձերբակալել են այն դպրոցի վերատեսչին, որ առաջ ապրել է Մօրանը, ինչպէս և ձերբակալել են շատ անիշխանական ուսուցիչների, որոնց վերաբերմամբ կասկած կայ։

ՎԱՐՇԱՎԱ, 24 մայիսի։ Վախճանվեց Վլադիվաստոկ բերդի նախկին լիբրդապետ գենեռալ Ժիրկէվիչը։

25 մայիսի

ՄՕԳԻԼԷՎ, 24 մայիսի։ Նահանգապետի նախագահութեամբ կայացաւ ազնուականների խորհրդակցութիւնը՝ քննելու այն հարցը, թէ ինչ տեսակի գաւառական հողային բարեկարգութեան մասնաժողովներ հաստատել, համաձայն մարտի 4-ի օրէնքի։ Որոշվել է այդ օրինակ մասնաժողովներ կազմել համարեա բոլոր գաւառներում։

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ, 24 մայիսի։ Երեկոյեան տեղական սօցիալ-դէմոկրատիայի բանուորական կուսակցութեան կոմիտէի անդամներից մի քանիսը զինված բրաունինգ ատրճանակներով, թւով 40 հոգի, ներս խուժեցին «Крымскій Вѣстникъ»-ի տպարանը և ձերբակալելով տպարանում գտնվողներին, ժողովեցին և կնքեցին «Солдатъ» թերթի մի քանի հազար օրինակները և անյայտացան։ Քննութիւն է կատարվում։ («Սոլդատ» թերթը կուսակցութեան անլէգալ օրգանն է)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի։ «Прав. Вѣстн.» տպված է, որ նոր նախագիծ է մշակվում գիւղացիական բանկի գործունէութեան վերաբերեալ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրել է, որ ուսուցիչները և ուսուցչուհիները այն ուսումնարանները, որոնք չեն պատկանում ազատական դասերին, իրանց ծառայակցութեան ամբողջ ժամանակ ազատվում են ամեն տեսակ անձնական տուրքերից և հպատակութիւնից այն հասարակութեան, որին որ իրանք պատկանում են։ «Наша Жизнь»-ի խմբագիրներ Խոտկին և Կոտէլնիկովը արգելվել են Սենատի որոշմամբ։ Արգելվել է նաև 129 յօդ. հիման վրա մեղադրվող «Вечъ Гол.»-ի խմբագիր Կոլտուշնովկին։

ԼՕՆԴՕՆ, 24 մայիսի։ «Դէյլի Խրօնիկլ»-ի ասելով, անգլիական էսկադրան, որ յուլիսին այցելելու է Կրոնշտադ,— բաղկացած կը լինի 7 զրահանաւերից և մի քանի սկանանաւերից։ Ի արիտուր այդ այցելութեան, ռուսաց էսկադրան օդտոսին կամ սեպտեմբերին այցելելու է Պորտսմուտ։

ՊՕԼՏԱՎԱ, 23 մայիսի։ Հիւսիսային նահանգներն են ուղարկում քաղաքական 86 բանտարկվածներ։

ԿՈՒՐՍԿ, 25 մայիսի։ Մայիսի 23-ին «Народн. Вѣстн.»-ում տպված էր Կուրսկից մի հեռագիր, որ իբր Կուրսկի զօրքի երեք գնդերը ապստամբվել և անկարգութիւններ են արել։ Հաղորդվում է պաշտօնապէս, որ ոչ մի միտինգ տեղի չէ ունեցել յիշեալ գնդերի մէջ։ Զինուորները բողոքել են սոսկ անտեսական հողի վրա։ Կարգը խախտելու դէպք տեղի չէ ունեցել. զինուորները իրանց ծառայութիւնը կատարում են օրինաւոր և կարգին։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 24 մայիսի։ «Южная Заря»-ի այսօրվայ համարը գրաւվեց։ Այդ համարում տպված էր Պլէխանովի՝ բանտորների պաշտպանութիւնը «Դումային» վերնագրով յօդուածը։

ՎԻԷՆՆԱ, 24 մայիսի։ Առաւօտեան ժամը 10-ին Վիլհէլմ կայսրը ժամանեց աւստրիական թագաւորի հետ Շէնբրուգ։ Լրագիրներից շատերը ողջունում են Վիլհէլմի այցելութիւնը, ասելով որ դա գրաւական է աւստրօ-գերմանական դաշնակցութեան անսասանութեան։ Լիբերալ մամլը կարծիք է յայտնում, որ այդ դաշնակցութեան առանձին նպատակը—միասնաբար կերպով Ռուսաստանին ընդդիմադրել—աւելի պարզ երևաց այն օրից, երբ Ռուսաստանը և Աւստրիան բալկանեան հարցի վերաբերմամբ համաձայնութիւն կապեցին։ «Ցայտի» կարծիքով, միապետների տեսակցութիւնը պէտք է բացատրել Գերմանիայի առանձնացմամբ—մարօքկան կօնֆերէնցիայից յետոյ, և Աւստրիայի և Իտալիայի լարված դրութիւնով։

ՊՕԼՏԱՎԱ, 24 մայիսի։ Գաւառական արտակարգ ժողովը մերժեց առաջարկը՝ Դումային շնորհաւորական հեռագիր ուղարկելու։ Ժողովը որոշեց, որ Դումայի գործունէութեան մասին ոչ մի լուր չը յայտնվի ազգաբնակութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուլկա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից,
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկրտութ. հ.
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներական. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՅԵՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԴԷՆԻԵՎ—12—1 ժ. ականջ, քթի և կոկորդի
Ա. Գ. ԽԱՐԱԳԵՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և նեարդայոց հ.
ԳՈՆ-ԲԷՅԵՆ Ա. Ի. ՇՁԻԳԲՐԻՆԻՆ—1½—2 ժ. մանկայոց հիւանդութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ե. Գ. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հոմեոպաթներն (կոնդիլոումի) և օղերապիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԱՅԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Շաբաթ, մայիսի 27-ին
Հայ դրամատիկ-արուեստասէրների խումբը մասնակցութեամբ գերասան պ. Անդրանիկի և տ. Ադնիսի կը ներկայացնէ ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄ հայերէն լեզուով
I
ԵՐԿՈՒ ՅԻՄՆԱԳԵՏ
Դրամա 3 գործ., թարգմ. Ա. Դօշոյեանի
II
200,000
Վօդ. 1 գործ., հեղ. Փոտնակէսի
Սկիզբն է հիշա 8½ ժամին երեկոյեան։
(ու.շ.) 1—2

Մայիսի 27-ին
ԿՐՈՒԺՕԿԻ
ամառային շինութեան մէջ կը կայանայ
ՄԵԾ ՄԱՆԿԱԿԱՆ ՏՕՆ
զանազան տեսակ պրոգրամայով։ Մանրամասնութիւնները աֆիշայում։ (ու.շ.) 1—2

ՄՈՂՆՈՒ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ
Ծխականները հրաւիրվում են մայիսի 28-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին, ծխական ընդհանուր ժողովի շարունակութեանը, քննելու և որոշելու հետևեալ հարցերը.
1. Զեկուցումն գործերի դրութեան մասին.
2. Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ. և հաշիւ եկեղեցու 1904/5 թ.
3. Ծխական տուրքի սահմանումն.
4. Դպրանոցն դպրոցի շինութեան հարցը.
5. Երեցփոխի զեկ. Յոհաննէսն դպր. հոդ. ընտրութեան մասին.
Ծխական ժողովի նախագահ՝ Ստ. Լիսիցեան
(ու. կ.) 1—2

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, միզային, վենէրական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչ փող. № 33/15 տ. Մրբիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 25—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօրսէլինսկի պրոսպեկտի և Կազեռնայա փողոցի, տուն թիւ 4։ Մուտքը Կազեռնայի փողոցից № 2.
(ա. օ.) 157—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽՍԲԻԳԵԱՆ
Ներքին եւ ճեղվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմօնտովսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 29—50

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մանագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36.
(կ.չ.ու.) 12—50

ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ
մի օրիորդ, որ գիտէ հայերէն և մուզիկա, ցանկանում է դասեր ունենալ ամառվայ ընթացքում կովկասեան հանքային ջրերում կամ մի այլ ամառանոցում, ընտանիքի մէջ։ Հասցէն. Вельяминовская № 6, աջ զանգը, հարցնել վերին յարկում։
(չ. ու. կ.) 2—5

ԹԵՄԱԿԱՆԱՒԱՐՏ
մի երիտասարդ, որ ունի երկար տարիների հմուտ փորձառութիւն ընդունում է (մատչելի գներով) հայերէն լիզուի դասեր հայ ընտանիքներում և խոստանում է լիակատար մայրենի ոգի զարթեցնել և ուղղել ճշտակար կամ վատ ուղղութիւն ստացած մանուկների բնաւորութիւնը։ Հասցէ. Սօլօլակ, Բեբուտովսկի փողոց № 44. հարցնել Մկրտիչ Յովհաննիսեանին։
(չ. ու. կ.) 2—6

ԱՏԱՄՆԵՐ
արհեստական, մաքրել, պլոմբ ածել, բժշկել և այլն։ Գր. Մատ. Իսխվէդ. Միխայլով, 90. գերմանական եկեղեցու դիմաց։ Երկաթուղային ծառայողներին, ուսանողներին և չքաւորներին զիջումով։ (կ.չ.ու.) 15—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴԱՊԱՏԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Զելեմինսկայա փողոց № 8։ (ե.ռ.)71—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑԸ
Ընդունում է հիւանդներին կովկասեան հանքային ջրերում Պեատիգորսկում։
Հասցէն Ելիզավետինսկայա փողոց, ուսանող եկեղեցու մօտիկ Արբիպօվի տունը, որտեղ Գրուպպի գրասենեակն է։
11—20

«ԿՈՒՌՈՒՆԿ»
ՀԱՆԳԷՍ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
(Երաժշտութիւն, ճարտարապետութիւն, եւ այլն)
(ԵՐԱՄՍԵԱՅ)
«ԿՈՒՌՈՒՆԿ»-ին նպատակն է՝
1. Հայ արուեստը ճանչցնել Հայուն,
2. Եւրոպ. արուեստը ճանչցնել Հայուն,
3. Հայ արուեստը ճանչցնել Եւրոպացուն։
«ԿՈՒՌՈՒՆԿ»-ին տարեկան բաժնեգինն է՝
Եւրոպայի համար 10 ֆրանգ
Ամերիկայի » 2 դալար
Ռուսիոյ » 4 ռուբլի
Անգլիոյ » 8 շիլին
Տաճկաստանի » 50 գրանեկան
«ԿՈՒՌՈՒՆԿ»-էն օրինակ մը իբր նմուշ ձրի ստանալու համար պէտք է գրել հետևեալ հասցէով՝
K. PROFF-KALFAIAN
Directeur-Rédacteur du «Groung»
159, Boulevard Montparnasse,
PARIS
(ու.)

ՎԱՃԱՌ
ԼԾԻ ՏԱԿ
վեպ բուլղարերի կեանքից՝ ազատութեան խրնթաց օրը
Առաջին և երկրորդ մասերը վերջանալով
(452 մեծադիր երես)
Գինը 1 ր., ճանապարհածախսով 1 ր. 35 կ.
Դիմել թանգարանչին՝ Александрополь, ваннесу Арабаджянцу կամ Тифлисъ, книжный магазинъ Гуттенбергъ։ Գրավաճառներին զեղչում։

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մանագէտ միզային, վենէրական և սիֆիլական հիւանդութիւնների. ընդունում ամեն օր, առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Գոնդարի Սեմենովսկի փողոց №